

101 ԱԿՆՀԱՅՏ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Հայերեն թարգմանված այս գրքում , հեղինակը նշում է Սուրբ Գրքի մեջ գոյություն ունեցող 101 հակասություններ:Այն մտորելու կոչ է հրեաներին և քրիստոնյաներին, որ գոյություն ունեն Սուրբ Գրքի տարբեր հեղինակներ :Այսպիսով, այն չի կարող հանդիսանալ որպես

սրբություն և Աստծո

Լուսաբանում :

<https://islamhouse.com/732311>

- 101 ԱԿՆՀԱՅՏ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ
 - 1. Ո՛վ հրահրեց Դավիթին
հաշվել Իսրայելի
մարտիկներին:
 - 2. Ըստ այդ հաշվարկի
քանի՞ մարտիկ գտնվեց
Իսրայելում:
 - 3. Քանի՞ մարտիկ գտնվեց
Յուդայում:
 - 4. Քանի՞ սովի տարիներ
սպառնաց Դավիթին,
Աստծո ուղարկած
մարգարեն:

- 5. Քանի՞ տարեկան էր Օրոզիան, երբ նա սկսեց կառավարել Երուսաղեմում:
- 6. Քանի՞ տարեկան էր Յովակիմը, երբ նա դարձավ Երուսաղեմի թագավոր:
- 7. Որքա՞ն նա կառավարեց Երուսաղեմը:
- 8. Քանի՞ մարդու սպանեց միանգամից Դավթի զորավարը, բարձրացնելով սուրը:
- 10. Աստծո հրահանգով, քանի՞ զույգ անպիղծ կենդանի պետք է տաներ Նոյր տապան:

- 11. Երբ Դավիթը հաղթեց թագավոր Չորահին, քանի՞ ձիավոր նա գերեց:
- 12. Որքա՞ն ձի ուներ Սողոմոնը ախոռներում:
- 13. Արքա Ասայի կառավարման ո՞րերորդ տարում Իսրայելի Արքա Բաասան մահացավ:
- 14. Քանի՞ վերակացու կարգեց Սողոմոնը տանարի կառուցման աշխատանքների համար:
- 15. Քանի՞ բաղնիք կար Սողոմոնի կառուցած հաստատությունում:
- 16. Բարելոնյան գերությունից ազատված Իսրայելցիներից քանի՞սն

- Էին Նեփթադիմ
Մովարացու որդիները:
- 17. Քանի՞ գավակ ուներ
Չարթն:
 - 18. Քանի՞ գավակ ուներ
Ազիան:
 - 19. Քանի՞ գավակ ուներ
Ադդին:
 - 20. Քանի՞ գավակ ուներ
Ասոււնր:
 - 21. Քանի՞ գավակ ունեյին
Բերթերը և Յեգէյր:
 - 22. Եզրասը 2:64 և
Նէեմիան 7:66 համամիտ
են, որ ընդհանուր թիվը
42,360 էր: Սակայն, թվերը
որևէ բանին սերտ չեն:
Յուրաքանչյուր գրքի
քանակը հետևյալն է.

- [23. Քանի՞ երգիչ էր ուղեկցում վեհաժողովը:](#)
- [24. Ի՞նչ էր արքա Արիասի մոր անունը:](#)
- [26. Ո՞վ էր Մարիամի ամուսնու, Հովսեփի հայրը:](#)
- [28. Ո՞վ էր Սադաթեյի հայրը:](#)
- [29. Չերուբաբեյի ո՞ր որդին էր հանդիսանում Հիսուս Քրիստոսի նախնին:](#)
- [30. Ո՞վ էր Օգիայի հայրը:](#)
- [31. Ո՞վ էր Յերոնիայի հայրը:](#)
- [32. Քանի՞ սերունդ էին այնտեղ, Բաբելոնի գերությունից մինչև Քրիստոսի:](#)

- [33. Ո՞վ էր Շելայի հայրը:](#)
- [34. Արդյո՞ք Հովհաննես Մկրտիչը Եղիան էր, ով պետք է գար:](#)
- [35. Արդյո՞ք Հիսուսը ժառագելու էր Դավթի գահը:](#)
- [36. Քանի՞ կենդանի հեծած, Հիսուսը գնաց Երուսաղեմ:](#)
- [37. Ինչպե՞ս Սիմոն Պողոսը պարզեց, որ Հիսուսը Քրիստոսն էր:](#)
- [38. Որտե՞ղ Հիսուսը առաջին անգամ հանդիպեց Սիմոն Պողոսին և Անդրեասին:](#)
- [39. Երբ Հիսուսը հանդիպեա Յայրոսին,](#)

- արդյո՞ք նրա դուստրը
արդեն մահացել էր:
- 40. Արդյո՞ք Հիսուսը
թուլյատրում էր իր
աշակերտներին իրենց
ճանապարհորդության
ընթացքում իրեր պահել:
- 41. Արդյո՞ք Հերովդեսը
կարծում էր, որ Հիսուսը
Հովհաննես Մկրտիչն էր:
- 42. Արդյո՞ք Հովհաննես
Մկրտիչը ճանաչեց
Հիսուսին մկրտությունից
առաջ:
- 43. Արդյո՞ք Հովհաննես
Մկրտիչը ճանաչեց
Հիսուսին մկրտությունից
հետո:
- 44. Ըստ Հովհաննեսի
Ավետարանի, ի՞նչ էր ասել

- Հիսուսը իր իսկ
վկայութեան մասին:
- 45. Երբ Հիսուսը մտավ
Երուսաղէմ, արդո՞ր նա
մաքրեց տաճարը նույն
օրը:
 - 72. Մատթէոսը և
Մարկոսը համամիտ են,
որ Հիսուսը գնաց և
աղոթեց երեք անգամ:
Որո՞նք էին երկրորդ
աղոթքի խոսքերը:
 - 73. Ի՞նչ ասաց
հարյուրապետը, երբ
Հիսուսը մահացավ:
 - 74. Երբ Հիսուսը ասաց.
“Իմ Տէր, իմ Տէր, ինչու՞ ես
դու ինձ լքել» ի՞նչ լեզվով
նա խոսեց:

- 75. Ըստ Ավետարանների, ո՞րն էին Հիսուսի խոսքերը մահից առաջ:
- 76. Երբ Հիսուսը մտավ Կափառնա, նա բժշկեց հարյուրապետի ստրուկին: Արդյո՞ք հարյուրապետը ինքն անձամբ եկավ խնդրելու Հիսուսին այդ մասին:
 - 77.
 - 78.
- 79. Արդյո՞ք Հիսուսից քացի որևէ այլ մեկը համբարձվեց երկինք:
- 80. Ո՞վ էր քահանայապետը, երբ Դավիթը գնաց Աստծո տուն և ճաշակեց նվիրաբերված հացը:

- 81. Արդյո՞ք, ըստ հրեական ավանդույթների, հուդարկավորումից առաջ Հիսուսի մարմինը պատված էր անուշաբույրերով:
- 82. Ե՞րբ էին կանայք գնել անուշաբույրը:
- 83. Օրվա ո՞ր ժամին կանայք այցելեցին գերեզմանը:
- 84. Ո՞րն էր կանանց գերեզման գնալու պատճառը:
- 85. Գերեզմանի մուտքի մեծ քարը տեղաշարժվել էր: Որտե՞ղ էր քարը, երբ կանայք ժամանեցին:

- 86. Արդյո՞ք որևէ մեկը
ասաց կանանց, թե ինչ է
պատահել Հիսուսի
մարմնի հետ:
- 87. Ե՞րբ Մարիամ
Մարգդադենացին,
առաջին անգամ
հանդիպեց հարուրթյուն
առած Հիսուսին: Եվ
ինչպե՞ս նա արձագանքեց:
- 88. Ի՞նչ հրահանգներ
տվեց Հիսուսը իր
աշակերտներին:
- 89. Ե՞րբ աշակերտները
վերադարձան Գալիլեա:
- 90. Ու՞մ վաճառեցին
Հովսեփին
Մադիանացիները:
- 91. Ո՞վ բերեց Հովսեփին
Եգիպտոս:

- 92. Արդյո՞ք Աստված գղջում է:
- 93. Աստվածաշունչը ասում է, որ Մովսեսի և Ահարոնի ներկայացրած ամեն հրաշքի դիմաց, մոզերը նույնն էին անում իրենց գաղտնի արվեստով: Այնուհետ գալիս էր հետևյալ հրաշքը.
- 94. Ո՞վ սպանեց Գողիարթին:
- 95. Ո՞վ սպանեց Սավուղին:
- 96. Արդյո՞ք յուրաքանչյուր մարդ մեղք է գործում:
- 97. Ո՞վ է կրում, ում բեռը:
- 98. Քանի՞ աշակերտների երևաց Հիսուսը իր հարուխյունից հետո:

- 99. Որտե՞ղ էր Հիսուսը իր մկրտությունից երեք օր անց:
- 100.Արդյո՞ք մանուկ Հիսուսի կյանքին վտանգ էր սպառնում Երուսաղեմում:
- 101. Երբ Հիսուսը քայլեց ջրի վրա, ինչպե՞ս աշակերտները արձագանքեցին:

101 ԱԿՆՀԱՅՏ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

1. Ո՞վ հրահրեց Դավիթին հաշվել Իսրայելի մարտիկներին:

- Աստված (Թագավորաց Բ. 24:1)

“1 Տիրոջ բարկութիւնը դարձեալ բորբոքուեց Իսրայէլի վրայ: Նա Դաւթին գրգռեց նրանց դէմ՝ ասելով. «Գնա՛ հաշուառում կատարի՛ր Իսրայէլում եւ Յուդայի երկրում»:

- Սատանան (Մնացորդաց Ա. 21:1)

“1 Սատանան ելաւ Իսրայէլի մէջ ու դրդեց Դաւթին մարդահամարի ենթարկելու Իսրայէլը:»

2. Ըստ այդ հաշվարկի քանի՞ մարտիկ գտնվեց Իսրայելում:

- Ութ հարյուր հազար (Թագավորաց Բ. 24:9)

“9Յովարը մարդահամարի տուեալները յանձնեց արքային. Իսրայէլն ունէր ութ հարիւր հազար սուսերակիր զինուոր, իսկ Յուդայի երկիրը՝ հինգ հարիւր հազար մարտիկ:»

• Մէկ միլիոն, հարյուր հազար (Մնացորդաց Ա. 21:5)

“5Յովարը Իսրայէլի ժողովրդի մարդահամարի տվեալները յանձնեց Դաւթին: Ամբողջ Իսրայէլում մէկ միլիոն մարդ կար եւ հարիւր հազար սուսերակիր. իսկ Յուդայի երկիրն ունէր չորս հարիւր յիսուն հազար սուսերակիր: »

3. Քանի՛ մարտիկ գտնվեց Յուդայում:

- Հինգ հարյուր հազար
(Թագավորաց Բ. 24: 9)

“9Յովաբը մարդահամարի տուեալները յանձնեց արքային. Իսրայելն ունէր ութ հարիւր հազար սուսերակիր զինուոր, իսկ Յուդայի երկիրը՝ հինգ հարիւր հազար մարտիկ:»

- Չորս հարյուր յոթանասուն հազար (Մնացորդաց Ա. 21:5)

“5Յովաբը Իսրայելի ժողովրդի մարդահամարի տվեալները յանձնեց Դաւթին: Ամբողջ Իսրայելում մէկ միլիոն մարդ կար եւ հարիւր հազար սուսերակիր. իսկ Յուդայի երկիրն ունէր չորս հարիւր յիսուն հազար սուսերակիր:»

4. Քանի՛ սովի տարիներ սպառնաց Դավիթին, Ասածո ուղարկած մարգարեն:

- Յորթ (Թագավորաց Բ. 24:13)

«13Գաղը եկաւ Դաւիթի մօտ,
սպասնեց ու սասաց. «Ընտրի՛ր որն
ուզուս ես. կա՛նք որ երկրուն երեք
տարի սով պիտի լինի, կա՛նք երեք
ամիս դու պիտի փախչեսք
թշնամիների առաջից, ու քեզ
պիտի հալածեն, կա՛նք էլ երեք օր
մահ պիտի լինիք որ երկրուն: Արդ,
մտածի՛ր ու սասա՛, թէ ի՞նչ
սպասասիսան տանեն ինձ
ուղարկողին» »

- Երեք (Մնացորդաց Ա. 21:12)

“12Կա՛ն երեք տարի սով կը լինի, կա՛ն երեք ամիս հալածական կը լինես քո թշնամիներից, եւ քո թշնամիների սուրը քեզ կը սպանի, եւ կա՛ն երեք օր Տիրոջ սուրը մահ կը սփռի քո երկրում, ու Տիրոջ հրեշտակը կը բնաջնջի Իսրայելի ամբողջ տարածքը: Արդ, տե՛ս, թէ ես ինչ պատասխան եմ տալու նրան, որ ինձ ուղարկել է»:»

5. Քանի՛ տարեկան էր Օրոզիան, երբ նա սկսեց կառավարել Երուսաղեմում:

- Քսաներկու (Թագավորաց Դ. 8:26)

“26Երբ Օրոզիան թագաւոր դարձաւ, քսաներկու տարեկան էր: Նա մէկ տարի թագաւորեց

Երուսաղէմում: Նրա մայրը
Իսրայէլի Ամրի արքայի դուստր
Գոթողիան էր:»

• Քառասուններկու
(Մնացորդաց Բ. 22:2)

“2Օրոզիասը թագաւոր դարձաւ,
էրբ քսաներկու տարեկան էր: Նա
մէկ տարի թագաւորեց
Երուսաղէմում: Նրա մօր անունը
Գոթողիա էր: Սա Ամրիի դուստրն
էր:»

**6. Քանի՛ տարեկան էր
Յովակիմը, էրբ նա դարձավ
Երուսաղէմի թագավոր:**

• Տասնութ (. Թագավորաց Դ.
24:8)

“ՃՅովաքիմը տասնութ տարեկան էր, որ թագաւոր դարձաւ, եւ երեք ամիս թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Նեսթա էր, նա երուսաղէմացի Ելամաթի դուստրն էր:»

• Ուր (Մնացորդաց Բ. 36:9)

“9Յովակիմի փոխարէն թագաւորեց իր որդի Յերոնիասը:»

7. Որքա՛ն նա կառավարեց Երուսաղէմը:

• Երեք ամիս (Թագավորաց Դ. 24:8)

“ՃՅովաքիմը տասնութ տարեկան էր, որ թագաւոր դարձաւ, եւ երեք ամիս թագաւորեց Երուսաղէմում:

Նրա մօր անունը Նեսթա էր, նա էրուսաղէմացի Ելամաթի դուստրն էր:

- Երեք ամիս և տաս օր.
(Մնացորդաց Բ. 36:9)

“9Յովակիմի փոխարէն թագաւորեց իր որդի Յերոնիասը:

8.Քանի՛ մարդու սպանեց միանգամից Դավթի զորավարը, բարձրացնելով սուրը:

- Ութ հարյուր (Թագավորաց Բ. 23:8)

“8Սրանք են Դավթի զօրավարների անունները. քանանացի Յերուսթէ՝ նոյն ինքը ասունացի Ադինոն մէկ երրորդ

մասի հրամանատար: Սա սուր էր քարձրացրել միանգամից ութ հարիւր զինուորների վրայ:»

• Երեք հարյուր (Մնացորդաց Ա. 11:11)

“11 Ահա Դաւթի հզօր մարդկանց անուանացանկն ու նրանց ու թիւը. Աքամանի որդի Իզբասամը՝ երեք զօրավարներից առաջինը: Սա էր, որ միայնակ իր սուրը քարձրացրեց երեք հարիւր հոգու դէմ եւ նրանց միաժամանակ սպանեց:”

9. Ե՞րբ բերեց Դավիթը Դաշնագրի Տապանը Երուսաղէմ:

Յերուսաղիներին հաղթելուց հետո, թե՛ առաջ:

• Հետո (Թագավորաց Բ. 5 և 6)

“1 Իսրայելի բոլոր ցեղերը եկան
Քեբրոն, Դաւթի մօտ, ու խօսելով
նրա հետ՝ ասացին. 2 «Մենք քո
նսկորը եւ քո մարմինն ենք:
Անցեալում, երբ Սաւուղը մեր
թագաւորն էր, դու էիր
իսրայելացիներին առաջնորդողը
եւ ի մի հաւաքողը: Տէրը քեզ
ասաց. «Դու պիտի հովուես
Իսրայելի իմ ժողովրդին, դու ես
լինելու Իսրայելի առաջնորդը»»: 3
Իսրայելի բոլոր ծերերը եկան
Քեբրոն, արքայի մօտ, եւ Դաւիթ
արքան նրանց հետ ուխտ դրեց
Քեբրոնում, Տիրոջ առջեւ: Նրանք
Դաւթին թագաւոր օժեցին
ամբողջ Իսրայելի վրայ: 4 Դաւիթը
երեսուն տարեկան էր, երբ

թագաւոր դարձաւ, եւ քառասուն
 տարի թագաւորեց.5 Ետքը տարի
 վեց ամիս թագաւորեց Բեբրոնուն
 Յուդայի երկրի վրայ եւ
 երեսուներեք տարի
 Երուսաղէմում՝ ամբողջ Իսրայէլի
 ու Յուդայի երկրի վրայ: 6 Դաւիթն
 իր զօրքով գնաց Երուսաղէմ, այդ
 երկրում բնակուող
 յեբրուսացիների դէմ: Դաւիթին
 ասացին, թէ՛ «Դու այստեղ չես
 մտնի, քանզի կոյրերն ու կաղերը
 քեզ դէմ են կանգնել եւ ասում են.
 «Դաւիթն այստեղ թող
 չմտնի»»:7 Դաւիթը գրաւեց Սիոնն
 ու նրա ամրոցը, որ Դաւիթի
 քաղաքն է: 8 Այդ օրը Դաւիթն
 ասաց. «Ով որ ուզում է կոտորել
 յեբրուսացիներին, թող սրով
 յարձակուի կաղերի, կոյրերի եւ

Դաւթի անձն ատողների վրայ»:

Դրա համար է, որ ասում են.

«Կոյրերն ու կաղերը չպէտք է

մտնեն Տիրոջ տունը»: 9Դաւիթն

ապրեց ամբողջում, եւ այն կոչուեց

Դաւթի քաղաք: Նա շուրջանակի,

ծայրից ծայր քաղաք շինեց եւ իր

համար էլ տուն կառուցեց:

10Դաւիթը գնալով հզօրանում էր,

եւ ամենակալ Տէրը նրա հետ

էր: 11Տիւրոսի արքայ Քիրամը

դեսպաններ ուղարկեց Դաւթի

մօտ, նաեւ եղեւնափայտ, փայտի

հիւսներ ու քարի վարպետներ,

որոնք Դաւթի համար տուն

շինեցին: 12Դաւիթը համոզուեց,

որ Տէրն է իրեն Իսրայէլի

թագաւոր հաստատել եւ իր

թագաւորութիւնը բարձրացրել իր

ժողովրդի՝ իսրայէլացիների

վրայ: 13 Դաւիթը Քերրոնից
Երուսաղէմ գալուց յետոյ ուրիշ
կանայք ու հարճեր եւս
առաւ: 14 Դաւիթն ուրիշ տղաներ
եւ աղջիկներ էլ ունեցաւ:
Երուսաղէմում նրա ունեցած
որդիների անուները սրանք են.
15 Սամաթ, Յեսիբաթ, Նաթան,
Գաղամասան, Յերաար,
16 Թեմետուս, Եղիփաղատ, Նազեդ,
Նափեկ, Յեննաթա, Եղիսամիս,
Բաղիգադ եւ Եղիփաղէս:
17 Այլազգիները լսելով, թէ
Դաւիթը Իսրայէլի թագաւոր է
օծուել, բոլորը ելան Դաւթի վրայ
յարձակուելու: 18 Երբ Դաւիթն
այդ իմացաւ, իջաւ ամրոցը:
Այլազգիները եկան ու
հաւարուեցին Տիտանների
հովիտներում: 19 Դաւիթը

հարցրեց Տիրոջը՝ ասելով.
«Յարձակուե՛մ այլազգիների
վրայ, նրանց իմ ձեռքը կը
մատնե՛ս»: Տէրն ասաց Դաւթին.
«Յարձակուի՛ր, քանզի
անպայման քո ձեռքն են
մատնելու այլազգիներին»:
«20Դաւիթն եկաւ Խրամատների
վրայից եւ այնտեղ կոտորեց
այլազգիներին: Դաւիթն ասաց.
«Տէրն իմ թշնամիներին իմ ձեռքով
կոտորեց այնպէս, ինչպէս ջրերն
են թմբերը ակերում»:
Դրա համար այդ տեղը կոչուեց
Խրամատների վրայ: 21Նրանք
այնտեղ թողեցին իրենց
աստուածներին, եւ Դաւիթն ու
իրեն ընկերակցող մարդիկ առան
դրանք: 22Այլազգիները կրկին
ոտքի ելան ու հաւաքուեցին

Տիտանների հովիտներում:
23Դաւիթը հարցրեց Տիրոջն՝
ասելով. «Յարձակուէ՛մ
այլազգիների վրայ, նրանց իմ
ձեռքը կը մատնե՛ս»: Տէրն ասաց.
«Մի՛ յարձակուիր նրանց վրայ,
շրջանցի՛ր նրանց ու նրանց
թիկունքից գնա՛ դէպի Լացի
անտառը: 24Երբ Լացի անտառից
շարժման ձայն լսես, այն
ժամանակ յարձակուի՛ր նրանց
վրայ, որովհետեւ այն ժամանակ է,
որ Տէրը դուրս է գալու քո առաջ,
որ պատերազմում կոտորի
այլազգիներին»: 25Դաւիթն արեց
այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել
նրան: Եւ նա կոտորեց
այլազգիներին Գարաւոնից մինչեւ
Գազերա:

“1Դաւիթը կրկին հաւաքեց
 Իսրայէլի բոլոր
 երիտասարդներին՝
 մօտաւորապէս եօթանասուն
 հազար հոգի: 2Դաւիթը, նրա հետ
 եղած ամբողջ ժողովուրդն ու
 Յուդայի երկրի իշխաններից
 ոմանք ելան գնացին այն
 զառիվերով, որով բարձրացուել էր
 Աստծու տապանակը, որին
 տրուած էր զօրութիւնների Տէր
 Աստծու անունը, եւ որի վրայ
 նստած է Աստուած քերովբէների
 միջեւ: 3Դաւիթը Տիրոջ
 տապանակը դրեց նոր սայլի վրայ,
 վերցրեց այն Ամինադաբ Բլրացու
 տնից:

4Ամինադաբի որդիները՝ Օզան ու
 նրա եղբայրներն էին քշոււ

տապանակը կրող սայլը, իսկ միւս
եղբայրները ընթանում էին
տապանակի առջեւից: 5Դաւիթն
ու իսրայելացիները Տիրոջ առաջ
տաւիղներ, հնչեղ նուագարաններ,
քնարներ, սրինգներ էին
նուագում, թմբուկներ, ծնծղաներ
զարկում ու փողեր էին հնչեցնում
ու երգում: 6Երբ եկան
Ամինադարի կայր, Օզան իր
ձեռքը գցեց Աստծու
տապանակին, որ այն բռնի: Նա
այն բռնեց, որովհետեւ լծկան
զուարակն այն շարժել էր իր
տեղից: 7Տէրը բարկացաւ Օզայի
վրայ եւ նրա յանդգնութեան
համար հարուածեց նրան
այնտեղ, եւ նա մեռաւ այնտեղ,
Տիրոջ տապանակի մօտ, Աստծու
առջեւ: 8Դաւիթը տրտմեց, որ

Տէրը մահացու հարուածեց
 Օգային նրա մեծ յանդգնութեան
 համար: 9 Այդ տեղը մինչեւ այսօր
 Օգայի Հարուած է կոչուում: Այդ
 օրը Դաւիթը վախեցաւ Տիրոջից
 եւ ասաց. «Տիրոջ տապանակը
 ինչպէ՞ս մտնի ինձ մօտ»:

10 Դաւիթը չուզեց Տիրոջ ուխտի
 տապանակը տանել իր մօտ՝
 Դաւթի քաղաքը, եւ Դաւիթը,
 շեղելով ճանապարհը, այն տարաւ
 գերացի Աբեդդարի տունը:

11 Տիրոջ տապանակը երեք ամիս
 մնաց գերացի Աբեդդարի տանը:
 Տէրն օրհնեց Աբեդդարին ու նրա
 ամբողջ տունը: 12 Այդ մասին
 յայտնեցին Դաւթին՝ ասելով.

«Տէրն Աստծու տապանակի
 համար օրհնել է Աբեդդարի տունն
 ու նրա ունեցած ամէն

ինչը»: Դաւիթը գնաց, Տիրոջ տապանակը հանեց Աբեդոդարի տնից եւ ուրախութեամբ բերեց Դաւթի քաղաքը: 13 Տապանակը տանողների հետ գնում էին պարողների եօթը խմբեր, զուարակ ու զառներ էին զոհ մատուցում: 14 Դաւիթը Տիրոջ առաջ տաւիղ էր նուագում: Նա պատմումնան էր հագել: 15 Դաւիթն ու Իսրայէլի ամբողջ տունը Տիրոջ տապանակը հանեցին ուրախութեան աղաղակ արձակելով ու փող հնչեցնելով: 16 Երբ տապանակը Դաւթի քաղաքին մօտեցաւ, Սաւուդի դուստր Մեդբողը նայում էր պատուհանից եւ տեսնելով, որ Դաւիթ արքան Տիրոջ առաջ պարում էր ու նուագարաններ

նուագում, արհամարհեց նրան իր հոգում: 17Տիրոջ տապանակը բերեցին ու դրեցին իր տեղը, վրանի մէջ, որ Դաւիթը դրա համար էր կանգնեցրել: 18Դաւիթը Տիրոջ առջեւ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցեց: Երբ Դաւիթն աւարտեց ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցելը, զօրութիւնների Տիրոջ անունից օրհնեց ժողովրդին: 19Նա Իսրայէլի բոլոր բնակիչներին՝ Դանից մինչեւ Բերսաբէէ, տղամարդկանց թէ կանանց, ամէն մէկին բաշխեց հացի մի բլիթ, կասկարայի վրայ եփուած արմաւով խմորեղէն եւ չամչով կարկանդակ: Ժողովրդի ամբողջ բազմութիւնը գնացին իրենց տները: 20Դաւիթը յետ

դարձաւ իր տունն օրհնելու. նրան
 ընդառաջ ելաւ Սաւուդի դուստր
 Մեդքոդը եւ, ողջունելով նրան,
 ասաց. «Վայե՛լ էր Իսրայէլի
 արքային, որ այսօր իր
 աղախինների ու ծառաների
 առաջ մերկանայ, ինչպէս
 մերկանում են պարողները»:
 21Դաւիթն ասաց Մեդքոդին. «Ես
 պիտի պարեմ Տիրոջ առջեւ:
 Օրհնեալ է Տէր Աստուածը, որն
 ինձ ընտրեց եւ ոչ թէ քո հօրն ու
 նրա ամբողջ տունը: Նա ինձ
 Իսրայէլի իր ժողովրդի վրայ
 առաջնորդ կարգեց: 22Ահա այդ
 Տիրոջ առաջ ես պիտի երգեմ ու
 պարեմ: Եւ դեռ էլ աւելի պիտի
 մերկանամ, քո աչքին անարգ
 պիտի երեւամ ու դրանով էլ քո
 ասած այդ աղախինների առաջ

պիտի փառաւորուեն»։ 23Եւ
Մաւուդի դուստր Մեդքողը մինչեւ
իր մահուան օրը զաւակ չունեցաւ։

• Առաջ (Մնացորդաց Ա. 13 և
14)

“1Դաւիթը խորհրդակցեց
հազարապետների ու
հարիւրապետների եւ բոլոր
իշխանների հետ։ 2Դաւիթն ասաց
հաւաքուած բոլոր
խորայելացիներին. «Եթէ զանում
էք, որ սա բարի գործ է ձեզ
համար, եւ մեր Տէր Աստուածն է
մեզ յաջողութիւն պարգեւել, մարդ
ուղարկենք Իսրայելի բոլոր
կողմերում մնացած մեր
եղբայրներին, որ իրենց
քաղաքներում ու կալուածքներում
ապրող քահանաներն ու

դեւտացիները գան մեզ մօտ
 ժողովի, Յմեզ մօտ բերենք մեր
 Աստծու տապանակը, քանզի
 Սաւուդի ժամանակներից ի վեր
 այդ հարցով չգրադուեցին»:

4Բոլոր հաւաքուածներն ասացին.

«Այդպէս անենք». որովհետեւ

ժողովուրդն այս խօսքերը

արդարացի համարեց: 5Դաւիթը

բոլոր իսրայէլացիներին հաւաքեց

Եգիպտոսի սահմաններից սկսած

մինչեւ Եմաթ, որ Աստծու

տապանակը տանեն Յարին

քաղաքից: 6Դաւիթը հանել տուեց

այն, եւ ամբողջ Իսրայէլը գնաց

Յուդայի երկրում գտնուող

Դաւթի քաղաքը, որ այնտեղից

բերեն Տէր Աստծու՝ քերովբէների

վրայ տեղադրուած տապանակը:

Եւ Տէր Աստծու անունը գրուած է

այդ տապանակի վրայ: 7 Աստծու տապանակը դրեցին Ամինադարի տնից բերուած մի նոր սայլի վրայ, եւ Օզան ու նրա եղբայրները քշում էին սայլը: 8 Դաւիթն ու բոլոր իսրայէլացիները եռանդագին պարում էին Աստծու առջեւ, սաղմոսներ երգելով, տաւիղներով, քնարներով, փողերով, թմբուկներով ու ծնծղաներով: 9 Նրանք եկան մինչեւ Քելունի կալը, եւ Օզան ձեռքը մեկնեց, որ բռնի տապանակը, որովհետեւ եզր տեղից շարժել էր այն: 10 Տէրը խիստ զայրացաւ Օզայի վրայ ու սպանեց նրան, որովհետեւ համարձակուել էր իր ձեռքը մեկնել տապանակին: Նա տեղնուտեղը մեռաւ Աստծու

առաջ: 11 Դաւիթը տրտմեց,
 քանզի Տէրը մահացու հարուածել
 էր Օգային: 12 Այդ վայրը մինչեւ
 այսօր կոչուում է Օգայի հարուած:
 Այդ օրը Դաւիթը Աստծուց
 վախենալով՝ ասաց. «Ես ինչպէ՞ս
 Աստծու տապանակն ինձ մօտ
 տանեմ»: 13 Եւ Դաւիթը
 տապանակն իր մօտ՝ Դաւթի
 քաղաքը չփոխադրեց, այլ
 ճանապարհը շեղեց ու տարաւ
 քետացի Աբեդդարի տունը:
 14 Աստծու տապանակը երեք
 ամիս մնաց Աբեդդարի տանը, եւ
 Աստուած օրհնեց Աբեդդարին եւ
 այն ամէնը, ինչ նա ունէր:

“1 Տիւրոսի արքայ Բիրամը
 Դաւթի մօտ ուղարկեց
 դեսպաններ, մայրի փայտ,

որմնադիրներ ու
 աստղճագործներ, որ տուն շինեն
 նրա համար: 2Դաւիթը
 հասկացաւ, որ Տէրն է իրեն
 ընտրել Իսրայէլի վրայ իշխելու
 համար, քանզի Իսրայէլի
 ժողովրդի համար նրա
 թագաւորութիւնը հզօրացել էր:
 3Դաւիթն այլ կանայք եւս առաւ
 Երուսաղէմում, որոնցից ծնուեցին
 ուրիշ տղաներ ու աղջիկներ:
 4Ահա անունները նրանց, որոնք
 ծնուեցին Երուսաղէմում.
 Սամաաս, Սոբաբ, Նաթան,
 Սողոմոն, 5Յեբաար, Ելիսաւ,
 Ելիփաղէտ, 6Նագեթ, Նափաատ,
 Յափիէ, 7Ելիսամա, Բաղիադա եւ
 Ելիփաղատ: 8Երբ այլազգիներն
 իմացան, թէ Դաւիթը ամբողջ
 Իսրայէլի վրայ թագաւոր է օծուել,

ելան Դաւթին գտնելու: Դաւիթն այդ լսելով՝ նրանց դիմաց ելաւ: ԶԵկան նաեւ այլազգիները, եւ նրանք միմեանց հանդիպեցին Հսկաների հովտում: 10 Դաւիթն Աստծուն հարցրեց՝ ասելով.

«Յարձակուե՛մ այլազգիների վրայ, դու նրանց իմ ձեռքը կը մատնե՛ս»: Տէրը նրան ասաց.

«Յարձակուի՛ր, եւ ես նրանց քո ձեռքը կը մատնեմ»: 11 Դաւիթը ելաւ գնաց Բաադփարասին եւ կոտորեց նրանց: Դաւիթն ասաց.

«Աստուած իմ թշնամիներին ջախջախեց իմ ձեռքով, պատառոտեց նրանց, ինչպէս ջրերն են պատառոտուում»: Սրա համար էր, որ այդ տեղը կոչուեց Բաադփարասին, այն է՝ Փարասինի պատռուածք:

12Նրանք իրենց աստուածներին
 այնտեղ թողեցին, եւ Դաւիթը
 պատուիրեց դրանք հրով այրել:
 13Այլազգիները կրկին
 յարձակուեցին, եւ նրանք իրար
 հանդիպեցին Հսկաների հովտում:
 14Դաւիթը դարձեալ հարցրեց
 Աստծուն, եւ Աստուած նրան
 ասաց. «Մի՛ գնա նրանց յետեւից,
 շո՛ւռ արի եւ նրանց թո՛ղ
 տանձենիների մօտ: 15Երբ
 տանձենիների կատարների
 շարժման ձայն լսես, այն
 ժամանակ ելի՛ր պատերազմի,
 քանզի Աստուած քո առջեւից
 գնալով՝ կոտորելու է այլազգիների
 բանակը»: 16Դաւիթն արեց
 այնպէս, ինչպէս Աստուած
 պատուիրել էր նրան, եւ նա
 կոտորեց այլազգիների բանակը

Գարաթոնից մինչև Գազերա:
17ԴԱԼԹԻ անունն ամբողջ
երկրում հռչակուեց, եւ Տէրը նրա
երկիւղը տարածեց բոլոր ազգերի
վրայ:

**10. Աստծո հրահանգով, քանի՞
գույգ անախիդ կենդանի պետք է
տաներ Նոյր տապան:**

• Երկու (Ծննդոց 6:19, 20)

“19Բոլոր կենդանիներից, բոլոր
գազաններից ու բոլոր էակներից
երկու-երկու կը մտցնես տապան,
որ նրանք կերակրուեն քեզ հետ:
Թող դրանք արու եւ էգ լինեն:
20Ամէն տեսակ թռչուններից,
ամէն տեսակ կենդանիներից,
երկրի ամէն տեսակ սողուններից՝
բոլորից երկու-երկու, արու եւ էգ,

թող մտնեն քեզ հետ, որ
կերակրուեն քեզ հետ:»

• Յորժ (Ծննդոց 7:2) Սակայն,
չնայած այս վերջին հրահանգի.
Միայն երկու գույգ գնացին
տապան (Ծննդոց 7:8-9)

“2Անպիղծ բոլոր կենդանիներից
եօթը-եօթը՝ արու եւ էգ, կը
մտցնես քեզ հետ, իսկ պիղծ բոլոր
կենդանիներից երկու-երկու՝ արու
եւ էգ,»

“8Անպիղծ թռչուններից ու պիղծ
թռչուններից, երկրի վրայ
սողացող բոլոր սողուններից
Զերկու-երկու՝ արու եւ էգ, Նոյի
հետ մտան տապան, ինչպէս
պատուիրել էր նրան Տէր
Աստուած:»

11. Երբ Դավիթը հաղթեց թագավոր Չոբահին, քանի՞ ձիավոր նա գերեց;

- Հազար յոթ հարյուր
(Թագավորաց Բ 8:4)

“4Դավիթը նրանից հազար մարտակառք, եօթը հազար հեծեալ ու քսան հազար հետեւակ գերի վերցրեց: Դավիթը բոլոր մարտակառքերը քանդեց՝ իր համար թողնելով միայն հարիւր մարտակառք:»

- Յոթ հազար (Մնացորդաց Ա 18:4)

“4Նրանից վերցրեց հազար մարտակառք, եօթը հազար ձիավոր ու քսան հազար

հետեւակ: Դաւիթը ջարդեց բոլոր մարտակառքերը՝ թողնելով միայն հարիւր մարտակառք:»

12. Որքա՞ն ձի ունէր Սողոմոնը ախոռներում:

• Քառասուն հազար
(Թագավորաց Գ 4:26)

“26Սողոմոնն ունէր քառասուն հազար մատակ լծկան ձիեր եւ տասներկու հազար երիվարներ:»

• Չորս հազար. (Մնացորդաց Բ 9: 25)

“25Սողոմոնն ունէր քառասուն հազար մատակ ձիեր մարտակառքերի համար եւ տասներկու հազար երիվարներ: Նա դրանք տեղաւորեց

մարտակառքերի համար սահմանուլաժ քաղաքներում. իսկ Երուսաղէմում Սողոմոնի մօտ մնացին որոշ քանակի մատակ ձիեր ու երիվարներ:»

13. Արքա Ասայի կառավարման ո՛րերորդ տարում Իսրայէլի Արքա Բաասան մահացավ:

• Քսանվեցերորդ տարում
(Թագավորաց Գ 15:33-16: 8)

“33Յուդայի երկրի արքայ Ասայի թագաւորութեան երրորդ տարում ամբողջ Իսրայէլի վրայ թագաւորեց Աքիայի որդի Բաասան: Նա քսանչորս տարի թագաւորեց Թերսայում:»

“ՑՅուդայի երկրի արքայ Ասայի թագաւորութեան քսանվեցերորդ տարուն Թերսայուն Իսրայէլի վրայ երկու տարի թագաւորեց Բասասայի որդի Ելան:»

• Դեռ ողջ էր երեսունվեցերորդ տարուն.(Մնացորդաց Բ 16:1)

“1 Ասայի թագաւորութեան երեսունութերորդ տարուն Իսրայէլի Բասաս արքան յարձակուեց Ցուդայի երկրի վրայ: Նա ամրացրեց Հռաման, որ փակի Ցուդայի երկրի արքայ Ասայի ելումուտը:»

14. Քանի՛ վերակացու կարգեց Սողոմոնը տաճարի կառուցման աշխատանքների համար:

- Երեք հազար վեց հարյուր
(Մնացորդաց Բ 2:2)

“ՉՆա հաւաքեց եօթանասուն հազար բեռնակիրներ, լեռներում աշխատող ութսուն հազար քարհատներ եւ նրանց վրայ վերակացուներ՝ երեք հազար վեց հարիւր մարդ:»

- Երեք հազար երեք հարյուր
(Թագավորաց Գ 5:16)

«16բացի երեք հազար հինգ հարիւր գործակալ ղեկավարներից, որ Սողոմոնը նշանակել էր գործաւորների վրայ:

**15. Քանի՞ բաղնիք կար
Սողոմոնի կառուցած
հաստատութիւնում:**

- Երկու հազար (Թագավորաց Գ 7: 26)

«26Ալազանի պղնձի հաստութիւնը մի թիզ էր. դրա շուրթը բաժակի շուրթի նման էր. դրա վրայ ծաղկած շուշան էր քանդակուած: Ալազանը մօտաւորապէս երկու հազար մար էր տանում:»

- Ավելի քան երեք հազար (Մնացորդաց Բ 4:5)

«5Մեծ ալազանի խորութիւնը մէկ թիզ էր, նրա շուրթը բաժակի շրթի նման էր, վրան շուշան ծաղիկներ էին քանդակուած, եւ երեք հազար չափ տարողութիւն ուներ: Նա այս ամէնն աւարտեց:»

**16. Բարեյոնյան գերությունից
ազատված Իսրայելիցիներից
քանի՞սն էին Նեփթաղիմ
Մովաբացու որդիները:**

• Երկու հազար ութ հարյուր
տասներկու (Եզրաս Բ 2:6)

«ՃՆեփթաղիմ Մովաբացու
որդիները, որոնք Յեսուի եւ
Ռովաբի որդիներից էին, երկու
հազար ութ հարիւր տասներկու.»»

• Երկու հազար ութ հարյուր
տասնուութ (Նէեմի 7:11)

«11 Փաարթմովաբի որդիները՝
Յեսուի եւ Յովաբի որդիներից՝
երկու հազար երկու հարիւր
տասնութ.»»

17. Քանի՞ գավակ ուներ Չաթուն:

• Ինը հարյուր քառասունհինգ
(Եզրաս Բ 2:8)

«8Չատոնայի որդիները՝ ինը
հարիւր քառասունհինգ»

• Ութ հարյուր քառասուն հինգ.
(Նէեմի 7:13)

«13Չաթուի որդիները՝ ութ հարիւր
քառասունհինգ.»

18. Քանի՞ գավակ ուներ Ազիան:

• Հազար երկու հարյուր
քսաներկու (Եզրաս Բ 2:12)

«12Արզիայի որդիները՝ երեք
հազար երեք հարիւր քսաներկու»

- Երկու հազար երեք հարյուր քսաներկու (Նէեմիա 7:17)

«17Ազիայի որդիները՝ երկու հազար երեք հարիւր քսաներկու»

19. Քանի՞ գավակ ուներ Ադդին:

- Չորս հարյուր հիսունչորս (Եզրաս Բ 2:15)

«15Ադդինայի որդիները՝ չորս հարիւր յիսունչորս.»

- Վեց հարյուր հիսունհինգ (Նէեմիա 7:20)

«20Ադինի որդիները՝ վեց հարիւր յիսունչորս.»

20. Քանի՞ գավակ ուներ Ասումը:

- Երկու հարյուր քսաներեք
(Եզրաս Բ 2:19)

«19Ասումի որդիները՝ երկու
հարիւր քսաներեք.»»

- Երեք հարյուր քսանութ
(Նէեմիա 7:22)

«22Բէասի որդիները՝ երեք
հարիւր քսանչորս»»

21. Քանի՞ գավակ ունեւին Բերթելը և Յեզելը:

- Երկու հարյուր քսաներեք
(Եզրաս Բ 2:28)

«28Բերթելի եւ Յեզելի որդիները՝
չորս հարիւր քսաներեք.»»

- Հարյուր քսաներեք (Նէեմիա
7:31)

«31Բեթլի եւ Արիի որդիները՝
հարիւր քսաներեք.»

**22. Եզրաս 2:64 և Նէեմիան
7:66 համամիտ են, որ
ընդհանուր թիվը 42,360 էր:
Սակայն, թվերը որևէ բանին
սերտ չեն: Յուրաքանչյուր գրքի
քանակը հետևյալն է.**

- 29,818 (Եզրաս Բ)
- 31,089 (Նէեմիա)

**23. Քանի՞ երգիչ էր ուղեկցում
վեհաժողովը:**

- Երկու հարյուր (Եզրաս 2:65)

«65Չհաշուած ծառաներին,
աղախիներին եւ նրանց
երեխաներին, որոնց թիւը եօթը

հազար երեք հարիւր
երեսունեօթն էր, չհաշուած նաեւ
սամոսերգու տղամարդկանց եւ
կանանց, որոնք երկու հարիւր
հոգի էին:»

• Երկու հարյուր
քառասունհինգ. (Նէեմիա 7:66)

«Ճճբացի իրենց ծառաներից ու
աղախիներին, որոնք եօթը
հազար երեք հարիւր
երեսունեօթը մարդ էին, իսկ
երգիչներն ու սաղմոսասացները՝
տղամարդիկ ու կանայք, երկու
հարիւր քառասունհինգ մարդ:»

**24. Ի՞նչ էր արքա Աբիասի մոր
անունը:**

- Միքայա, Գիբիյացի Ուրիելի դուստրը. (Մնացորդաց Բ 13:2)

«Չնա Երուսաղէմում թագաւորեց երեք տարի: Նրա մայրը Աբեսաղոմի դուստրն էր, անունը՝ Մաաքա: Պատերազմ էր տեղի ունենում Աբիասի ու Յերոբովամի միջեւ:»

- Մաքա, Աբասղոմի դուստր (Մնացորդաց Բ 11:20). Սակայն, Աբասղոմը ուներ միայն մեկ դուստր, որի անունն էր Թամար (Թագավորաց Բ 14:27)

«20Դրանից յետոյ նա ամուսնացաւ Աբեսաղոմի դուստր Մաաքայի հետ, եւ սա նրա համար ծնեց Աբիասին, Եթթիին, Իզային, Սալեմոթին:»

«27Աբեսադունը երեք տղայ եւ մէկ աղջիկ ունեցաւ, որի անունն էր Թամար: Նա տեսքով շատ գեղեցիկ կին էր եւ, դառնալով Սողոմոնի որդի Ռոբովամի կինը, նրա համար ծնեց Աբիային:»

25. Արդյո՞ք Հիսուն և
Իսրայելցիները գրավեցին
Երուսաղէմը:

• Այո (Յեսու 10:23,40)

«23Այդպէս էլ արեցին. հինգ թագաւորներին՝ Երուսաղէմի թագաւորին, Քերրոնի թագաւորին, Յերիմուլթի թագաւորին, Լաքիսի թագաւորին եւ Օդոդոմի թագաւորին քարայրից հանեցին ու տարան նրա մօտ:»

«40Յեսոււն հարուածեց ամբողջ լեռնային երկրին, Նագերին եւ դաշտային երկրներին, Ասեդոթին եւ նրա բոլոր թագաւորներին: Նրանցից ոչ մէկին ողջ չթողեց, բոլոր բնակիչներին սպանեց, ինչպէս Իսրայէլի Տէր Աստուածն էր պատուիրել:»

• Ոչ (Յեսոււ 15: 63)

«63Յերուսացիները բնակւում էին Երուսաղէմում, եւ Յուդայի որդիները չկարողացան մարտնչել նրանց դէմ, ուստի յերուսացիները մինչեւ այսօր Երուսաղէմում բնակւում են Յուդայի որդիների հետ:»

26. Ո՛վ էր Մարիամի ամուսնու, Հովսեփի հայրը:

- Հակոբ (Մատթեոս 1:16)

«16Մատթանը ծնեց Յակոբին.
Յակոբը ծնեց Յովսէփին՝
Մարիամի մարդուն, որի նշանաձևն
էր կոյս Մարիամը, որից ծնուեց
Յիսուս, որ անուանուեց
Քրիստոս:»

- Եսդին (Ղուկաս 3:23)

«23Եւ սա՝ Մատթէի, եւ սա՝
Ամոսի, եւ սա՝ Նաւումի, եւ սա՝
Էսդիի, եւ սա՝ Նանգէի,»

27. Դավիթի որդիներից ո՞րի
ժառանգն է հանդիսանում
Հիսուսը:

- Սողոմոնի (Մատթեոս 1:6)

«Յեասէն ծնեց Դաւիթ արքային:
Դաւիթը ծնեց Սողոմոնին՝
Ուրիայի կնոջից»

- Կաթանի (Ղուկաս 3:29)

«29Եւ սա՝ Մելլէի, եւ սա՝ Մեննէի,
եւ սա՝ Մատաթայի, եւ սա՝
Կաթանի, եւ սա՝ Դաւիթի»

28. Ո՛վ էր Սաղաթելի հայրը:

- Յերոնիան (Մատթեոս 1:12)

«12Բարելոնում գերութիւնից
յետոյ Յերոնիան ծնեց
Սաղաթելին»

- Ղևին (Ղուկաս 3:27)

«27Եւ սա՝ Յեսուի, եւ սա՝
Եղիազարի, եւ սա՝ Յորամի, եւ
սա՝ Մատթէի, եւ սա՝ Ղելիի,»

29. Չարուբաբեյի ո՞ր որդին էր հանդիսանում Հիսուս Բրիտոսի նախնին:

- Աբիուդը (Մատթեոս 1:13)

«13Սաղաթիելը ծնեց Չորոբաբեյին. Չորոբաբեյը ծնեց Աբիուդին. Աբիուդը ծնեց Եդիակիմին.»

- Ռեզան (Ղուկաս 3:27)

Սակայն, Չարուբաբեյի յոթ որդիների անուններն են. Մեշուլամ, Հանանիա, Հաշուբա, Օհել, Բերեքիա, Հասադիա, Յուշարհեսեդ (Մնացորդաց Ա 3:19, 20), Աբիուդ և Ռեզա անունները ամենևին չեն համապատասխանում:

«27Եւ սա՛ Յեսուի, եւ սա՛
Եղիազարի, եւ սա՛ Յորամի, եւ
սա՛ Մատթէի, եւ սա՛ Ղեւիի.»»

«19Սաղաթիելի որդիները՝
Զօրաբաբել եւ Սեմէի:
Զօրաբաբելի որդիները՝
Մասողամոս, Անանիաս եւ նրանց
քոյր Սաղոմէ: 20Նաեւ՝ Ասերա,
Օող, Բարաքիաս, Ասադիաս եւ
Ասոբասէդ՝ ընդամէնը ութ հոգի:»»

30. Ո՛վ էր Օգիայի հայրը:

- Յորամը (Մատթէոս 1:8)

«8Բորբովամը ծնեց Աբիային.
Աբիան ծնեց Ասափին. Ասափը
ծնեց Յոսափատին. Յոսափատը
ծնեց Յորամին. Յորամը ծնեց
Օգիային»»

- Ամասիասը (Մնացորդաց Բ 26:1)

«1Եւ երկրի ամբողջ ժողովուրդը առաւ տասնվեցամեայ Օգիասին եւ թագաւոր դարձրեց նրան իր հայր Ամասիասի փոխարէն:»

31. Ո՛վ էր Յեքոնիայի հայրը:

- Յոսիան (Մատթեոս 1:11)

«11Ամոսը ծնեց Յոսիային. Յոսիան ծնեց Յեքոնիային եւ նրա եղբայրներին՝ Բաբելոնում գերութեան ժամանակ:»

- Յովակիմը (Մնացորդաց Ա 3:16)

«16Յովակիմի որդիները. Յեքոնիաս եւ Սեդեկիաս:»

32. Քանի՞ սերունդ էին այնտեղ, Բաբելոնի գերութունից մինչև Քրիստոսի:

- Մատթեոսն ասում է
տասնչորս (Մատթեոս 1:17)

«17Արդ, Աբրահամից մինչև
Դավիթը բոլոր սերունդները՝
տասնչորս սերունդ. եւ Դավթից
մինչև Բաբելոնի մէջ գերութիւնը՝
տասնչորս սերունդ. Բաբելոնի մէջ
գերութիւնից մինչև Քրիստոս՝
տասնչորս սերունդ:»

- Սակայն, սերունդների
մանրակրկիտ հաշվարկի դեպքում
երևան է գալիս միայն տասներեքը
(տես. Մատթեոս 1:12-16)

«12Բարելոնում գերութիւնից
յետոյ Յեքոնիան ծնեց
Սաղաթիէին. 13Սաղաթիէը ծնեց
Չորոբաբէին. Չորոբաբէը ծնեց
Աբիուդին. Աբիուդը ծնեց
Եղիակիմին. 14Եղիակիմը ծնեց
Ազորին. Ազորը ծնեց Սադոկին.
Սադոկը ծնեց Աքինին. Աքինը
ծնեց Եղիուդին. 15Եղիուդը ծնեց
Եղիազարին. Եղիազարը ծնեց
Մատթանին. 16Մատթանը ծնեց
Յակոբին. Յակոբը ծնեց
Յովսէփին՝ Մարիամի մարդուն,
որի նշանաձն էր կոյս Մարիամը,
որից ծնուեց Յիսուս, որ
անուանուեց Քրիստոս:»

33. Ո՛վ էր Շեյալի հայրը:

- Կայնանը (Ղուկաս 3:35-36)

«35Եւ սա՛ Մաթուսաղայի, եւ սա՛
Ենոքի, եւ սա՛ Յարեղի, եւ սա՛
Մաղաղայէլի, եւ սա՛
Կայնանի, 36Եւ սա՛ Ենոսի, եւ սա՛
Սէթի, եւ սա՛ Ադամի, եւ սա՛
Աստծու»

- Արփաքսադը (Ծննդոց 11:12)

«12Արփաքսադը հարիւր
երեսունհինգ տարեկան
հասակում ծնեց Կայնանին:»

34. Արդո՛ր Հովհաննէս Մկրտիչը Եղիան էր, ով պետք է գար:

- Այո (Մատթեոս 11:14, 17:10-13)

«14Եւ եթէ ուզոււմ էք ընդունել,
Յովհաննէ՛սն է Եղիան, որ գալու
է»

«10Աշակերտները նրան հարցրին
եւ ասացին. «Հապա ինչո՞ւ
օրէնսգէտներն ասում են, թէ նախ
Եղիան պիտի գայ»: 11Յիսուս
պատասխանեց եւ ասաց նրանց.
«Եղիան կը գայ եւ կը
վերահաստատի ամէն ինչ 12բայց
ձեզ ասում են, որ Եղիան արդէն
իսկ եկել է. բայց նրան
չճանաչեցին, այլ, ինչ որ կամեցան,
արեցին նրան. նոյնպէս եւ մարդու
Որդին նրանց ձեռքով
չարչարուելու է»: 13Այն ժամանակ
աշակերտները հասկացան, թէ
Յովհաննէս Մկրտչի մասին էր
ասել իրենց:»

- Ոչ (Հովհաննես 1:19-21)

«19Եւ Յովհաննէսի վկայութիւնը այս է. երբ հրեաները Երուսաղէմից քահանաներ ու ղեւտացիներ ուղարկեցին նրա մօտ, որպէսզի հարցնեն նրան՝ դու ո՞վ ես, 20նա խոստովանեց առանց վարանելու.

խոստովանեց, թէ՛ ես Քրիստոսը չեմ: 21Ու նրան հարցրին՝ իսկ դու ո՞վ ես, Եղիա՞ն ես: Եւ նա ասաց՝ ո՛չ, չեմ: Իսկ դու մարգարէ՞ն ես: Նա պատասխանեց՝ ո՛չ:»

35. Արդյո՞ք Հիսուսը ժառագելու էր Դավթի գահր:

- Այո. Այսպէս էր ասել հրեշտակը (Դուկաս 1:32)

«32Նա մեծ կը լինի եւ Բարձրեալի որդի կը կոչուի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի արձողը, եւ նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ»

• Ոչ, քանզի նա Յովակիմի ժառանգորդն էր (տես Մատթեոս 1:11, Մնացորդաց Ա 3:16): Աստված անիծել էր Յովակիմին, որ նրա ոչ մի ժառանգ չի նստի Դաւթի գահին: (Յերեմիա 36:30)

«11Ամոսը ծնեց Յոսիային. Յոսիան ծնեց Յեքոնիային եւ նրա եղբայրներին՝ Բաբելոնում գերութեան ժամանակ»

«16Յովակիմի որդիները. Յեքոնիաս եւ Սեդեկիաս:»

«30Իսկ Յուդայի երկրի Յովակիմ արքային էլ կ'ասես, թե այսպես է ասում Տէրը. «Դու վառեցիր մատեանն այն եւ ասացիր՝ ' Ինչո՞ւ նրա մէջ գրեցիր ու յայտնեցիր, թե քաբելացիների արքան պիտի ներխուժի ու ջնջի այս երկիրը, պիտի զրկի այն մարդ ու անասունից'»»:

36. Քանի՞ կենդանի հեծած, Հիսուսը գնաց Երուսաղէմ:

• Մեկ քուռակ (Մարկոս 11:7, Դուկաս 19:35) “Եվ նրանք բերեցին մարուկը Հիսուսին, զգեցին իրենց հագուստները դրա վրա և նա հեծեց այն:»

«7Աւանակը բերեցին Յիսուսի մօտ. եւ դրա վրայ զգեստներ զցեցին, եւ Յիսուս նստեց դրա վրայ:»

«35Եւ այն բերին Յիսուսի մօտ. զգեստներ զցեցին նրա վրայ եւ Յիսուսին նստեցրին»

• Երկու քուռակ եւ ավանակ (Մատթեոս 21:7) «Նրանք բերեցին ավանակը եւ քուռակը եւ զցեցին իրենց հագուստները դրանց վրա եւ նա հեծնեց:»

«7Եւ էշն ու քուռակը բերեցին, նրանց վրայ զգեստներ զցեցին. եւ նա նստեց դրանց վրայ:»

37. Ինչպե՞ս Միմոն Պողոսը պարզեց, որ Հիսուսը Քրիստոսն էր:

- Երկնային հայտնությունը
(Մատթեոս 16:16)

«16Յիսուս պատասխանեց եւ նրան ասաց. «Երանի՛ է քեզ, Միմոն՛ն, Յովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է:»

- Իր եղբայր Անդրեասը ասաց նրան. (Հովհաննես 1:41)

«41Սա նախ գտնում է իր եղբայր Միմոնին ու նրան ասում է.
«Գտանք Մեսիային» (որ թարգմանում է՝ Քրիստոս):»

38. Որտե՞ղ Հիսուսը առաջին անգամ հանդիպեց Միմոն Պողոսին և Անդրեասին:

• Գալիլեայի ծովեզերքի մոտ
(Մատթեոս 4:18-22)

«18Մինչ Յիսուս Գալիլիայի
ծովեզերքով քայլում էր, տեսաւ
երկու եղբայրների՝ Միմոնին, որ
Պետրոս էր կոչւում, եւ նրա
եղբայր Անդրեասին. ծովի մէջ
ուռկան էին գցում, քանի որ
ձկնորսներ էին: 19Եւ նրանց
ասաց. «Իմ յետեւի՛ց եկէք, եւ ես
ձեզ մարդկանց որսորդներ պիտի
դարձնեմ»: 20Եւ նրանք իսկոյն
թողնելով ուռկանները՝ գնացին
նրա յետեւից: 21Եւ այնտեղից
առաջ գնալով, տեսաւ երկու այլ
եղբայրների՝ Չերեդէոսի որդի

Յակորբուսին եւ նրա եղբայր
Յովհաննէսին, մինչ նաւակի մէջ
էին իրենց հօր՝ Չերեդէնուսի հետ
միասին եւ իրենց ուռկանները
կարգի էին բերում. եւ նրանց էլ
կանչեց:

• Հորդանան գետի ափին
(Հովհաննէս 1:42), Այնուհետ
Հիսուսը որոշեց գնալ Գալիլեա
(Հովհաննէս 1:43)

«42Սա նրան տարաւ Յիսուսի
մօտ: Նայելով նրան՝ Յիսուս
ասաց. «Դու Յովնանի որդի
Սիմոնն ես. դու պիտի կոչուես
Կեփաս» (որ թարգմանում է՝
Պետրոս):»

«43Յաջորդ օրը Յիսուս որոշեց
Գալիլիա մեկնել. գտաւ

Փիլիպպոսին ու նրան ասաց.
«Արի՛ իմ յետեւից»:»

**39. Երբ Հիսուս հանդիպեա
Յայրոսին, արդո՞ք նրա
դուստրը արդէն մահացել էր:**

• Այո, Մատթեոս 9:18
մեջբերում է նրան ասելով.՝ «Իմ
դուստրը հենց հիմա մահացավ:»

«18Մինչ Յիսուս նրանց այս
բաներն էր ասում, ահա մի
իշխանաւոր, մօտենալով,
երկրպագեց նրան ու ասաց. «Իմ
դուստրը հենց նոր մեռաւ, սակայն
գայիր եւ քո ձեռքը նրա վրայ
դնէիր, եւ նա կը կենդանանար»:

- Ոչ, Մարկոս 5:23 մեջբերում է նրան ասելով. «Իմ փոքրիկ դուստրը մահվան շեմին է:»

«23սաստիկ աղաչում էր նրան ու ասում, որ իր դուստրը մահամերձ է, եւ որ նա գայ ու նրա վրայ իր ձեռքը դնի, որպէսզի առողջանայ եւ ապրի:»

**40. Արդյո՞ք Հիսուսը
թուլլատրում էր իր
աշակերտներին իրենց
ճանապարհորդության
ընթացքում իրեր պահել:**

- Այո (Մարկոս 6:8)

«Տես իր մօտ կանչեց Տասներկուսին եւ սկսեց ուղարկել նրանց երկու-երկու ու պիղծ

նզիների վրայ նրանց
իշխանութիւն տուեց:»

• Ոչ. (Մատթեոս 10:9, Գուկաս
9:3)

“9Մի՛ ունեցէք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ
եւ ո՛չ էլ պղինձ դրամ՝ ձեր
գօտիների մէջ.»

«3Եւ ասաց նրանց.

«Ճանապարհի համար ոչինչ մի՛
վերցրէք. ո՛չ գաւազան եւ ո՛չ
մախաղ, ո՛չ հաց եւ ո՛չ արծաթ
դրամ. երկու հագուստ մի՛
ունեցէք.»

**41. Արդյո՞ք Հերովդեսը
կարծում էր, որ Հիսուսը
Հովհաննէս Մկրտիչն էր:**

- Այո. (Մատթեոս 14:2,
Մարկոս 6:16)

“2«Նա՛ է Յովհաննէս Մկրտիչը.
մեռելներից յարութիւն է առել, եւ
դրա համար նրա միջոցով
զօրաւոր գործեր են լինում»:

«16Ուրիշներ ասում էին, թէ՛
Եղիան է. իսկ միւսները, թէ՛
մարգարէ է կամ թէ՛ մարգարէների
նման մէկը:»

- Ոչ (Դուկաս 9:9)

«9Հերովդէսն ասաց.
«Յովհաննէսին ես գլխատեցի, իսկ
սա ո՛վ է, որի մասին այսպիսի
բաներ են լսում»: Եւ ուզում էր
նրան տեսնել:»

**42. Արդյո՞ք Հովհաննես
Մկրտիչը ճանաչեց Հիսուսին
մկրտութունից առաջ:**

- Այո (Մատթեոս 3:13-14)

«13Այն ժամանակ Յիսուս
Գալիլիայից Յորդանան եկաւ,
Յովհաննէսի մօտ՝ նրանից
մկրտուելու: 14Իսկ Յովհաննէսն
ընդդիմացաւ նրան ու ասաց.
«Ի՛նձ պէտք է, որ քեզնից
մկրտուեմ, եւ դու ի՞նձ մօտ ես
գալիս»:

- Ոչ (Հովհաննես 1:32.33)

«32Յովհաննէսը վկայեց եւ ասաց.
«Տեսայ Հոգին, որ իջնում էր
երկնքից որպէս աղաւնի եւ
հանգչում նրա վրայ:»

«33Եւ ես չէի ճանաչում նրան. սակայն նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ինձ ասաց. «Ում վրայ տեսնես, որ Հոգին իջնում է մնում է, նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով»:

43. Արդյո՞ք Հովհաննես Մկրտիչը ճանաչեց Հիսուսին մկրտութիւնից հետո:

- Այո (Հովհաննես 1:32,33)

«32Յովհաննէսը վկայեց եւ ասաց. «Տեսայ Հոգին, որ իջնում էր երկնքից որպէս աղաւնի եւ հանգչում նրա վրայ» «33Եւ ես չէի ճանաչում նրան. սակայն նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ինձ ասաց. «Ում վրայ տեսնես, որ

Հոգին իջնում է մնում է, նա՛ է, որ
մկրտում է Սուրբ Հոգով»:

• Ոչ (Մատթեոս 11:2)

“ԶԻսկ Յովհաննէսը, երբ բանտում
լսեց Քրիստոսի գործերի մասին,
ուղարկեց իր աշակերտներին եւ
նրանց միջոցով ասաց նրան.»

44. Ըստ Հովհաննէսի
Ավետարանի, ի՞նչ էր ասել
Հիսուսը իր իսկ վկայութեան
մասին:

• «Եթէ ես վկայեմ իմ մասին, իմ
վկայութիւնը ճշմարիտ չէ:»
(Հովհաննէս 5:31)

31 «Եթէ ես եմ վկայում իմ մասին,
իմ վկայութիւնը հաւաստի չէ:»

- «Նույնիսկ, եթե ես վկայեմ իմ մասին, իմ վկայությունը ճշմարիտ է:» (Հովհաննես 8:14)

«14 Յիսուսն աստասիսանեց եւ ասաց նրանց. «Թէպէտ ես վկայում եմ իմ անձի մասին, իմ վկայութիւնը ճշմարիտ է, որովհետեւ գիտեմ, թէ որտեղից եկայ եւ ուր եմ գնում: Բայց դուք չգիտէք՝ որտեղից եմ գալիս կամ ուր եմ գնում:»

45. Երբ Հիսուսը մտավ Երուսաղեմ, արդո՞ր նա մաքրեց տաճարը նույն օրը:

- Այո. (Մատթեոս 21:12)

“12 Եւ Յիսուսն մտաւ տաճար ու դուրս հանեց բոլոր նրանց, որ

տանարի մէջ վաճառում ու
գնումներ էին անում. նա շուռ
տուեց լուճայափոխների
սեղաններն ու
աղաւնեվաճառների աթոռները:»

· Ոչ, Նա մտավ տանար, դիտեց
շուրջբոլորը, սակայն, ոչինչ չարեց,
քանի որ շատ ուշ էր: Փոխարենը,
նա գնաց Բեթանիա գիշերելու և
հաջորդ առավոտ վերադառնալու,
տանարը մաքրելու համար:
(Մարկոս 11:1-17)

1 Երբ մօտեցան Երուսաղէմին,
Բեթփագէին եւ Բեթանիային,
Ձիթենեաց լերան մօտ, նա
ուղարկեց աշակերտներից
երկուսին եւ նրանց ասաց. 2 «Դուք
գնացէ՛ք այդ գիւղը, որ ձեր
դիմացն է. եւ հէնց որ այնտեղ

մտնէք, կը գտնէք մի կապուած
աւանակ, որի վրայ ոչ մի մարդ
արարած չի նստել. արձակեցէ՛ք
այն եւ բերէ՛ք: 3Եւ եթէ մէկը ձեզ
ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք
արձակում», կ'ասէք. «Տիրոջը
պէտք է». եւ նա իսկոյն դրան
այստեղ կ'ուղարկի»: 4Գնացին եւ
գտան աւանակը՝ կապուած դռան
մօտ, դրսում, փողոցի մէջ, եւ այն
արձակեցին: 5Եւ այնտեղ
կանգնածներից ոմանք ասացին
նրանց. «Ի՞նչ էք անում, ինչո՞ւ էք
այդ աւանակն արձակում»: 6Եւ
նրանք նրանց ասացին, ինչպէս
Յիսուս ասել էր. ու նրանց թոյլ
տուին: 7Աւանակը բերեցին
Յիսուսի մօտ. եւ դրա վրայ
զգեստներ գցեցին, եւ Յիսուս
նստեց դրա վրայ: 8Եւ շատեր

իրենց զգեստները փռում էին
 ճանապարհին. եւ ուրիշներ
 ծառերից ճիւղեր էին կտրում ու
 զգում ճանապարհի վրայ: 9 Եւ
 նրանք, որ առաջից ու յետեւից էին
 գնում, աղաղակում էին եւ ասում.

«Ովսաննա՛ Բարձրեալին,
 օրհնեա՛լ լինի նա, որ գալիս է
 Տիրոջ անունով. 10 օրհնեա՛լ լինի
 մեր հօր՝ Դաւթի

թագաւորութիւնը, որ գալիս է:
 Խաղաղութի՛ւն՝ երկնքում եւ
 փա՛նք՝ բարձունքներում»: «11 Եւ
 Յիսուս մտաւ Երուսաղէմ, գնաց
 տաճար ու նայեց իր շուրջը, ամէն
 ինչի վրայ. եւ որովհետեւ երեկոյի
 ժամ էր, բարձրացաւ Բեթանիա՝
 Տասներկուսի հետ միասին:

12 Յաջորդ օրը, մինչ Բեթանիայից
 դուրս էին գալիս, Յիսուս քաղցած

Էր: 13 Եւ հեռուից մի տերեւալից թզենի տեսնելով՝ եկաւ, որ թերեւս նրա վրայ մի բան գտնի. եւ երբ նրան մօտեցաւ, ոչինչ չգտաւ, այլ միայն՝ տերեւ, որովհետեւ տակաւին թզի ժամանակը չէր:

14 Յիսուս խօսքը թզենուն ուղղեց եւ ասաց. «Էլ քեզնից ոչ ոք պտուղ չուտի յաւիտեան»: Եւ նրա աշակերտները լսում էին:»

“15 Եկան Երուսաղէմ. եւ Յիսուս տաճար մտնելով՝ սկսեց դուրս հանել տաճարում գտնուող վաճառողներին ու գնորդներին եւ լուսայափոխների սեղանները ցրեց ու աղաւնեվաճառների աթոռները շուռ տուեց. 16 եւ չէր թողնում, որ որեւէ մէկը տաճարի միջով նոյնիսկ որեւէ բան անցկացնի: 17 Եւ ուսուցանում էր

նրանց ու ասում. «Գրուած է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղօթքի տուն է կոչուելու, իսկ դուք այն դարձրել էք աւազակների որջեր»:

46. Ավետարաններն ասում են, որ Հիսուսը անիծեց թզենին, [արդո՛ք ծառը անմիջապէս չորացավ:](#)

• Այո ([Մատթեոս 21:19](#))

19Եւ ճանապարհի վրայ մի թզենի տեսնելով՝ եկաւ դէպի այն եւ նրա վրայ ոչինչ չգտաւ, այլ միայն՝ տերել: Եւ թզենուն ասաց.

«Այսուհետեւ քեզնից յաւիտեան պտուղ թող չլինի»: Եւ նոյն պահին թզենին չորացաւ»

• Ոչ. Այն չորացավ գիերվա
ընթացքում: (Մարկոս 11:20)

“20Յաջորդ օրը, առաւօտեան,
մինչ նոյն ճանապարհից էին
անցնում, թզենին արմատից
չորացած տեսան:»

47. Արդո՞ք Հուդան համբուրեց
Յիսուսին:

• Այո.(Մատթեոս 26:48-50)

“48Եւ նա, որ նրան մատնելու էր,
նրանց նշան էր տուել ու ասել.
«Ում հետ ես համբուրուեմ, նա՛ է,
նրան կը բռնէք»:49Եւ սա իսկոյն
մօտենալով Յիսուսին՝ ասաց.
«Ողջո՛յն, Վարդապե՛տ». ու նրա
հետ համբուրուեց: 50Իսկ Յիսուս
նրան ասաց. «Ընկե՛ր, սրա՛

համար դու եկար»: Այն
ժամանակ, մտտենալով, **ձեռք
բարձրացրին Յիսուսի վրայ ու
նրան բռնեցին:**»

• Ոչ. Հուդան չէր կարող
բավարար մտտենալ Հիսուսին,
**նրան համբուրելու: Հովհաննես
(18:3-12)**

«ՅԵՒ Յուդան իր հետ վերցնելով
գունդը եւ պահակներ՝
ուղարկուած
քահանայապետներից ու
փարիսեցիներից, այնտեղ եկաւ
ջահերով, լապտերներով ու
զէնքերով: 4Իսկ Յիսուս իր վրայ
եկող այս ամէնը տեսնելով՝ դուրս
ելաւ ու նրանց ասաց. «Ո՛ւմ էք
փնտռում»: 5Նրան
պատասխանեցին՝ Յիսուս

Նազովրեցուն: Յիսուս նրանց
 ասաց՝ ես եմ: Նրանց հետ էր եւ
 Յուդան, որ մատնում էր նրան:
 Ճերբ Յիսուս ասաց՝ ես եմ, յետ-
 յետ գնացին եւ գետին
 ընկան: 7 Դարձեալ նրանց
 հարցրեց՝ ո՞ւմ էք փնտռում:
 Նրանք ասացին՝ Յիսուս
 Նազովրեցուն: 8 Յիսուս նրանց
 պատասխանեց. «Ձեզ ասացի, թէ՛
 ես եմ. արդ, եթէ ինձ էք փնտռում,
 նրանց թո՛յլ տուէք
 գնալ». 9 որպէսզի կատարուի
 խօսքը, որ ասել էր, թէ՛ նրանց,
 որոնց ինձ տուեցիր, նրանցից եւ
 ոչ մէկին չկորցրի: 10 Իսկ Սիմոն
 Պետրոսը, որովհետեւ սուր ունէր,
 քաշեց այն եւ զարկեց
 քահանայապետի ծառային ու
 նրա աջ ականջը կտրեց: Եւ այն

ծառայի անունը Մադքոս
էր 11 Յիսուս Պետրոսին ասաց.
«Այդ սուրդ նորից իր պատեանի
մէջ դիր. այն բաժակը, որ Հայրն է
ինձ տուել, չպիտի՞ խմեմ»: 12 Իսկ
գունդը, հազարապետը եւ
հրեաների պահակները բռնեցին
Յիսուսին եւ կապեցին:»

48. Ի՞նչ է ասել Հիսուսը, Պետրոսի
ուրացման մասին:

• «Աքաղաղը չի կանչի, մինչ դու
ինձ չուրանաս երեք անգամ:»
(Հովհաննէս 13:38)

“38 Յիսուս պատասխանեց. «Ինձ
համար կեանքդ կը տաս.
ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում
քեզ, քաղաղը դեռ կանչած չի

լինի, երբ դու երեք անգամ ինձ ուրացած կը լինես»:

• «Մինչ արադադը կկանչի երկու անգամ, դու ինձ կուրանաս երեք անգամ:» (Մարկոս 14:30)
Երբ արադադը կանչեց մեկ անգամ, երեք ուրացումները դեռ չէին ավարտվել: (Տես Մարկոս 14:72) Ուստի, կանխատեսումը ճախողվեց:

“30Եւ Յիսուս նրան ասաց.
«Ճշմարիտ եմ ասում քեզ, որ դու այս գիշեր իսկ, դեռ արադադը չկանչած, երեք անգամ պիտի ուրանաս ինձ»:

“72Եւ հէնց նոյն ժամին արադադը երկրորդ անգամ կանչեց: Եւ Պետրոսը յիշեց այն խօսքը, որ

Յիսուս ասել էր իրեն, թե՛
«Աքաղաղը դեռ երկու անգամ
չկանչած՝ դու երեք անգամ ինձ
պիտի ուրանաս». եւ սկսեց լալ:»

49. Արդյո՞ք Հիսուսը կրեց իր իսկ
խաչը:

• Այո. (Հովհաննես 19:17-18)

“17Այն ժամանակ Յիսուսին
յանձնեց նրանց ձեռքը, որպէսզի
խաչը հանուի: 18Եւ նրանք առան
Յիսուսին եւ տարան: Եւ
խաչափայտը նա ինքն էր վերցրել
եւ բարձրացնում էր այն տեղը,
որի անունն էր Փագաթ, իսկ
երբայերէն կոչւում էր Քողզոթա,»

• Ոչ. (Մատթեոս 27:31-32)

«31 Եւ երբ նրան ծաղրուծանակի ենթարկեցին, նրա վրայից հանեցին քղամիդը ու նրան հագցրին իր զգեստը. եւ տարան նրան խաչը հանելու: 32 Եւ դուրս ելնելով՝ գտան կիւրենացի մի մարդ՝ Սիմոն անունով, ու նրան ստիպեցին, որ նա խաչը կրի:»

50. Արդյո՞ք Հիսուսը մահացավ, մինչ տաճարի վարագույրի պատռվելը:

• Այո, (Մատթեոս 27:50-51; Մարկոս 15:37-38)

«50 Եւ Յիսուս դարձեալ բարձր ձայնով աղաղակեց եւ հոգին աւանդեց: 51 Եւ ահա տաճարի վարագոյրը վերելից մինչեւ ներքեւ երկուսի պատռուեց, եւ

երկիրը շարժուեց, եւ ժայռեր
ճեղքուեցին,»

«37Եւ Յիսուս բարձր ձայն
արձակեց ու հոգին աւանդեց:
38Եւ տաճարի վարագոյրը
վերելից մինչեւ ներքեւ երկուսի
պատռուեց»

· Ոչ. Վարագոյրը պատռվելուց
հետո, Հիսուսը բղավեց
բարձրաձայն ասելով. «Հայր, քո
ձեռքն եմ հանձնում իմ հոգին» Եվ
ասելով այս, **նա հոգին ավանդեց:**
(Դուկաս 23:45-46)

«45Եւ տաճարի վարագոյրը
մէջտեղից պատռուեց: 46Եւ
Յիսուս բարձրաձայն աղաղակեց
եւ ասաց. «Հայր, քո ձեռքն եմ

աւանդում իմ հոգին»: Երբ այս
ասաց, **հոգին աւանդեց:**»

51. Արդյո՞ք որևէ գաղտնի բան
ասաց Հիսուսը:

• Ոչ. «Ես ոչ մի գաղտնի բան
չեմ ասել:» (Հովհաննէս 18:20)

«20 Յիսուս նրան պատասխանեց.
«Ես բացայայտ ասացի բոլորին.
Ես միշտ ուսուցանել եմ
ժողովարանում եւ տաճարի մէջ,
ուր հաւաքւում էին բոլոր
հրեաները. եւ ծածուկ ոչինչ չեմ
խօսել:»

• Այո. «Նա խոսեց նրանց հետ
առակով, սակայն առանձին,
**բացատրեց իր իսկ
աշակերտներին ամեն ինչ:**»

(Մարկոս 4:34) Աշակերտները հարցրեցին.» Ինչո՛ւ ես դու խոսում նրանց հետ առակներով:» Նա ասաց. «Ձեզ տրված է իմանալ երկնային թագավորության գաղտնիքները, սակայն նրանց այդ տրված չէ:» (Մատթեոս 13:10-11)

«34Եւ առանց առակի նրանց հետ ոչինչ չէր խօսում, բայց իր աշակերտների համար առանձին ամէն ինչ մեկնում էր:»

«10Եւ աշակերտները մօտենալով՝ նրան ասացին. «Ինչո՛ւ ես առակներով խօսում նրանց հետ»: 11Նա պատասխանեց եւ ասաց նրանց. «Քանի որ ձե՛զ է տրուած իմանալ երկնքի արքայութեան

խորհուրդները, իսկ նրանց
տրուած չէ.»

52.Ո՞րտեղ էր Հիսուսը խաչման
վեցերորդ օրը:

• Իսաչի վրա (Մարկոս 15:23)

«23Չմուռսով խառնուած գինի
տուին նրան, բայց նա չվերցրեց:»

• Պիղատոսի դատարանում
(Հովհաննէս 19:14)

«14Իսկ երբ Պիղատոսը այս
խօսքերը լսեց, Յիսուսին դուրս
բերեց, նստեց բեմի վրայ, այն
տեղը, որ Քարայատակ էր
կոչւում, իսկ երբայերէն՝
Կապապաթա:»

53. Ավետարանները ասում են, որ երկու ավագակ խաչվեցին Հիսուսի հետ: Արդյո՞ք երկու ավագակներն էլ ծաղրեցին Հիսուսին:

• Այո. (Մարկոս 15:32)

«32Այդ Քրիստոսը՝ Իսրայելի այդ թագաւորը, թող այժմ իջնի խաչից, որպէսզի տեսնենք եւ հաւատանք դրան»: Եւ նրա հետ խաչուածներն էլ նախատում էին նրան:»

• Ոչ. Նրանցից մեկը ծաղրեց Հիսուսին, իսկ մյուսը պաշտպանեց: (Դուկաս 23:43)

«43ԵԼ Յիսուս նրան ասաց.

«Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես»:

54. Արդյո՞ք Հիսուսը համբարձվեց Դրախտ, [խաչելության նույն օրը](#):

• Այո. Նա ասաց ավազակին, ով պաշտպան կանգնեց նրան, [“Այսօր դու կլինես Դրախտում ինձ հետ:»](#) ([Ղուկաս 23:43](#))

«43ԵԼ Յիսուս նրան ասաց.

«Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես»:

• Ոչ. Երկու օր անց, նա ասաց Մարիամ Մագդաղենացուն, [”Ես դեռ չեմ համբարձվել Հոր մոտ:»](#) ([Հովհաննես 20:17](#))

«17Յիսուս նրան ասաց. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի որ դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դեպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»»

55. Երբ Պողոսը Դամասկոս մեկնող ճանապարհին էր, նա տեսավ լույս և ձայն լսեց: Արդյո՞ք նրանք, ովքեր նրա հետ էին լսեցին ձայնը:

• Այո. (Գործք 9:7)

“7Սօղոսը գետնից վեր կացաւ, սակայն բաց աչքերով իսկ ոչ ոքի չէր տեսնում: Նրա ձեռքից բռնած մտցրին Դամասկոս:»

- Ոչ (Գործք 22:9)

«9Ինձ հետ եղողները եւս լոյսը տեսնում էին, բայց չէին լսում այն ձայնը, որ ինձ հետ խօսում էր:»

56. Երբ Պողոսը տեսավ լույսը, նա ընկավ գետնին: Արդյո՞ք նրա ճանապարհի ուղեկցորդները նույնպես ընկան գետնին:

- Այո (Գործք 26:14)

“14Եւ երբ մենք բոլորս գետին ընկանք, լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր երբայերէն լեզուով.
«Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում. քեզ համար խիստ դժուար է խթանի դէմ արագել»:»

- Ոչ (Գործք 9:7)

«7Սօղոսը գետնից վեր կացաւ, սակայն բաց աչքերով իսկ ոչ ոքի չէր տեսնում: Նրա ձեռքից բռնած մտցրին Դամասկոս:»

57. Արդյո՞ք ձայը ասաց, **Պողոսի պարտավորութիւնների մասին:**

• Այո. (Գործք 26: 16-18)

«16Վե՛ր կաց ու կանգնի՛ր ոտքերիդ վրայ. ես քեզ երեւացի նրա համար, որ քեզ նշանակեմ պաշտօնեայ եւ վկայ այն բոլորի համար, որոնց մէջ ինձ տեսար եւ այն բաների համար, որոնցով պիտի երեւամ քեզ.» «17Ես քեզ կը փրկեմ ժողովրդիցդ եւ հեթանոսներից, որոնց մէջ քեզ կ'ուղարկեմ,» «18որպէսզի բանաս նրանց աչքերը, նրանց դարձնես

խաւարից դէպի լոյս եւ
սատանայի իշխանութիւնից՝
դէպի Աստուած, որպէսզի նրանք
մեղքերի թողութիւն ստանան եւ
սրբերի հետ ժառանգութեան
բաժին՝ իմ հանդէպ ունեցած
հաւատով»:

• Ոչ Չայնը հրահանգեց
Պողոսին գնալ Դամասկոս և
որտեղ նրան կասկի, թե ինչ պետք
է անել. (Գործք 9:7; 22:10)

«7Սօղոսը գետնից վեր կացաւ,
սակայն բաց աչքերով իսկ ոչ որի
չէր տեսնում: Նրա ձեռքից բռնած
մտցրին Դամասկոս:»

«10Եւ ես ասացի. «Ի՞նչ պետք է
անեմ, Տէ՛ր»: Եւ Տէրն ինձ ասաց.
«Վե՛ր կաց եւ գնա՛ Դամասկոս, եւ

այնտեղ քեզ կը պատմուի այն բոլորի մասին, որ հրամայուած է քեզ անել»:

58. Երբ իսրայելացիները բնակութիւն հաստատեցին Սատտինում, նրանք շնացան Մոսքի դուստրերի հետ: Աստված պատժեց նրանց ժանտախտով: Որքա՞ն մարդ զոհվեց այդ ժանտախտից:

• Բսանչորս հազար (Թվեր 25:1 և 9)

«Իսրայելացիները բնակատեղի դրեցին Սատտինում եւ պղծուեցին այնտեղ մովաբացիների դուստրերի հետ պռռնկանալով:»

«9Այդ կոտորածից քսանչորս հազար մարդ մեռաւ:»

- Քսաներեք հազար (Կորնթացիներ Ա 10:8)

«8Եւ չպոռնկանանք, ինչպէս նրանցից ոմանք պոռնկացան, եւ մի օրում ընկան քսանչորս հազարը:»

59. Հակոբի տան քանի՞ անդամներ եկան Եգիպտոս:

- Յոթանասոււն շունչ (Ծննդոց 46:27)

«27Յովսէփը Եգիպտոսում ունեցաւ երկու որդի: Այսպիսով Յակոբի ընտանիքի՝ Եգիպտոս մտած բոլոր տղամարդկանց թիւը եօթանասոււնն է:»

Նշում “Հունական
Աստվածաշնչում այն
յոթանասունն է, սակայն հայերեն
Աստվածաշնչում թարգմանված է
յոթանասուն հինգ, **Այնպես որ
անհրաժեշտ է ճշտել:**»

• Յոթանասուհինգ շունչ
(Գործք 7:14)

«14Յովսեփը մարդ ուղարկեց եւ
բերել տուեց Յակոբին՝ իր հօրը եւ
ամբողջ ազգատոհմին՝
եօթանասուհինգ հոգի:»

60.Ի՞նչ արեց Հուդան արյան
գումարով, **որը նա ստացավ
Հիսուսին մատնելու համար:**

• Նա ազարակ գնեց (Գործք
1:18)

«18Սա իր անիրաւութեան վարձով մի ագարակ գնեց եւ ուռչելով մէջտեղից պատռուեց, ու նրա ամբողջ փորը դուրս թափուեց:»

• Նա ամբողջ գումարը նետեց տաճար և հեռացավ:

Վանականները չէին կարող տաճարի գանձարանում դնել արյան գումարը, ուստի նրանք գնեցին ագարակ,

օտարականների

հուղարկավորելու համար:

(Մատթեոս 27: 5)

«5Եւ արժաթ դրամները նետեց տաճարի մէջ եւ հեռացաւ ու գնաց ինքն իրեն կախեց:»

61. Ինչպե՞ս մահացավ Հուդան:

- Գուճարը նետելուց հետո, նա հեռացավ և ինքն իրեն կախեց: (Մատթեոս 27:5)

«ՏԵՆ արձաթ դրամները նետեց տանարի մէջ եւ հեռացաւ ու գնաց ինքն իրեն կախեց:»

- Ազարակը չար արարքի գուճարով գնելուց հետո, նա ուռչեց մէջտեղից և նրա ամբողջ փորոսիքը դուրս թափվեց: (Գործք 1:18)

«18Սա իր անիրաւութեան վարձով մի ազարակ գնեց եւ ուռչելով մէջտեղից պատռուեց, ու նրա ամբողջ փորը դուրս թափուեց:»

62. Ինչու՞ ազարակը անվանեցին «Արյան Ազարակ »

• «Որովհետև վանականները
գնեցին այն, արյան գումարով »:
(Մատթեոս 27:8)

«ՑԱյդ պատճառով այդ ազարակը
կոչուել է Արեան ազարակ՝ մինչեւ
այսօր:»

• Այնտեղ, Հուդայի արյունալի
մահվան պատճառով: (Գործք
1:19)

«19Եւ այս բանը յայտնի եղաւ
բոլոր նրանց, որոնք
Երուսաղէմում են բնակւում,
այնպէս որ մինչեւ իսկ այն
ազարակը կոչուեց իրենց

բարբառով Ակեղդամա, այսինքն՝
Արեան ազարակ.»

63. Ո՞վ է փրկանք և ու՞մ համար:

• “Մարդու որդին եկավ.. տալու
իբ կյանքը որպես փրկանք
շատերին:» (Մարկոս 10:45)

«Հիսուս Քրիստոսը տվեց իրեն
փրկանք բոլորին...» (Տիմոթեոս Ա
2:5-6)

«45որովհետև մարդու Որդին էլ
չեկավ ծառայութիւն ընդունելու,
այլ՝ ծառայելու եւ տալու իբ անձր
որպէս փրկանք շատերի
փոխարէն»:

«5քանզի մէկ Աստուած կայ եւ
մէկ միջնորդ՝ Աստծու եւ
մարդկանց միջեւ. Յիսուս

Քրիստոս՝ մարդը, ճոր տուեց ինքն
իրեն որպէս փրկանք բոլորի
համար՝ ի վկայութիւն իր
ժամանակների.»

64. Արդյո՞ք Մովսեսի օրենքը օգտակար էր:

• Այո. «Ամբողջ գիրը շահեկան
է..» (Տիմոտեոս Բ 3:16)

«16 Աստծու շնչով գրուած ամէն
գիրք օգտակար է ուսուցման,
յանդիմանութեան, ուղղելու եւ
արդարութեան մէջ խրատելու
համար,»

• Ոչ «... Նախակին պատվիրանը
մի կողմ է դրվել իր թույլ և
անօգուտ լինելու պատճառով...»
(Եբրայեցիներ 7:18)

«18Առաջին պատուիրանը արհամարհուեց իր տկարութեան եւ անօգտակարութեան պատճառով,»

65. Ո՞րն է խաչի վրայի ճիշտ ձևակերպումը:

• «Սա Հիսուսն է, Հրեաների Թագավորը » (Մատթեոս 27:37)

«37Եւ նրա գլխի վերելը դրեցին նրա յանցապարտութեան գիրը, թէ՛ սա՛ է Յիսուսը՝ հրեաների թագաւորը:»

• «Հրեաների Թագավոր» (Մարկոս 15:26)

«26Եւ կար նրա դատապարտութեան մասին

գրութիւն՝ գրուած այսպէս.
«Հրեաների թագաւորն է:»

• «Սա է Թագաւորը
Հրեաների» (Ղուկաս 23:38)

«38Եւ նրա խաչի վրայ մի
գրութիւն կար՝ գրուած յունարէն,
լատիներէն եւ եբրայերէն գրերով,
թէ՛ սա՛ է հրեաների արքան:»

• «Հիսուսը Նազովրեցի,
թագաւորը Հրեաների »
(Հովհաննէս 19:20)

«20Պիղատոսը մի տախտակ էլ
գրեց եւ դրեց խաչի վրայ. եւ
գրուած էր. «Յիսուս Նազովրեցի՝
հրեաների թագաւոր»:»

66. Արդյո՞ք Հերովդեսը
ցանկացավ սպանել Հովհաննես
Մկրտիչին:

• Այո (Մատթեոս 14:5)

«5Եւ կամենում էր նրան սպանել,
բայց վախենում էր ժողովրդից,
քանի որ նրան որպէս մարգարէ
էին ընդունում:»

• Ոչ, Այդ Հերովդիսան էր,
Հերովդեսի կինը, **ով ցանկանում
էր սպանել նրան:** Սակայն
Հերովդեսը գիտեր, որ նա
առաքինի մարդ էր և չվնասեց
նրան (Մարկոս 6:20)

«20Եւ Հերովդիսան ոիս էր պահել
նրա դէմ ու ուզում էր նրան

սպանել տալ, բայց չէր
կարողանում,»

67. Ո՞վ էր Հիսուսի տասներորդ
աշակերտը, **տասներկուսի
ցուցակում:**

• Թադեոսը (Մատթեոս 10:1-4 ;
Մարկոս 3:13-19)

«1Եւ նա իր մօտ կանչելով իր
տասներկու աշակերտներին՝
նրանց իշխանութիւն տուեց պիղծ
դէւերի վրայ՝ հանելու դրանք եւ
բժշկելու ամէն ցաւ եւ ամէն
հիւանդութիւն: 2Եւ տասներկու
առաքեալների անունները սրանք
էին. առաջին՝ Սիմոն Պետրոս
կոչուածը, եւ նրա եղբայրը
Անդրէաս, 3Չերեղէոսի որդի
Յակոբոս եւ նրա եղբայրը

Յովհաննէս, Փիլիպպոս եւ
 Բարթողոմէոս, Թովմաս եւ
 Մատթէոս մաքսաւոր, Ալփէոսի
 որդի Յակոբոս եւ Ղերէոս, որ
 Թադէոս կոչուեց, 4Սիմոն
 Կանանացի եւ Յուդա
 Իսկարիովտացի, որ եւ մատնեց
 նրան:»

«13Յիսուս լեռը բարձրացաւ եւ իր
 մօտ կանչեց նրանց, որոնց ինքը
 կամեցաւ. եւ նրանք գնացին նրա
 մօտ: 14Նա նշանակեց
 Տասներկուսին, որ իր շուրջը
 լինեն, եւ նրանց քարոզելու
 ուղարկի, 15ու նրանք
 իշխանութիւն ունենան ցաւեր
 բուժելու եւ դելեր հանելու: 16Եւ
 Սիմոնի անունը Պետրոս
 դրեց,«17եւ Չերեղէոսի որդու`

Յակոբոսի ու նրա եղբոր՝
 Յովհաննէսի անունները դրեց
 Բաներեզէս, որ նշանակում է՝
 Որոտման որդիներ: 18Եւ
 Անդրէասին եւ Փիլիպպոսին եւ
 Բարթողոմէոսին եւ մաքսաւոր
 Մատթէոսին եւ Թովմասին եւ
 Ալփէոսի որդի Յակոբոսին եւ
 Թադէոսին եւ Սիմոն
 Կանանացուն 19Եւ Յուդա
 Իսկարիովտացուն, որը եւ նրան
 մատնեց:»

• Հուդան Հակոբի որդին, այս
 Դուկասի Ավետարանում գտնվող
 անունն է. (Դուկաս 6:12-16)

«12Եւ այդ օրերին Յիսուս լեռ
 բարձրացաւ աղօթելու եւ ամբողջ
 գիշերն անցկացրեց Աստծուն
 աղօթելով: 13Եւ երբ լոյսը

բացուեց, կանչեց իր
 աշակերտներին եւ ընտրեց
 նրանցից տասներկուսին, որոնց
 եւ առաքեալներ
 անուանեց. 14 Սիմոնին, որին էլ
 Պետրոս կոչեց, եւ Անդրեասին՝
 նրա եղբօրը, Յակոբոսին,
 Յովհաննէսին, 15 Փիլիպպոսին,
 Բարթոլոմէոսին, Մատթէոսին,
 Թովմասին, Ալփէոսի որդի
 Յակոբոսին, Սիմոնին՝
 Նախսանձայոյզ
 կոչուածին, 16 Յակոբի որդի
 Յուդային եւ Իսկարիովտացի
 Յուդային, որը եւ մատնիչ եղաւ:»

68. Հիսուսը տեսավ մի մարդու
 մաքսատանը և կոչեց նրան
 լինելու իր աշակերտը: Ի՞նչ էր նրա
 անունը:

- Մատթեոս (Մատթեոս 9:9)

«9Եւ Յիսուս այնտեղով անցնելով տեսաւ Մատթեոս անունով մի մարդու, որ նստել էր մաքսատանը, ու նրան ասաց. «Իմ յետեւի՛ց արի»։ Եւ նա վեր կենալով՝ գնաց նրա յետեւից։»

- Ղեվի (Մարկոս 2:14; Ղուկաս 5:27)

«14Եւ մինչ նա անցնում էր, տեսաւ Ալփէոսի որդի Ղեւիին, որ մաքսատանը նստած գործի վրայ էր, ու նրան ասաց՝ արի՛ իմ յետեւից։ Եւ Ղեւին վեր կացաւ գնաց նրա յետեւից։»

«27Դրանից յետոյ, դուրս ելաւ այնտեղից եւ տեսաւ մի

մաքսաւորի, որի անունը Ղեւի էր, եւ որը մաքսատանը նստած՝ գործի վրայ էր: Յիսուս նրան ասաց. «Իմ յետեւից արի՛»:

69. Արդյո՞ք Հիսուսը խաչվեց Չատիկի ընթրիքից առաջ, **թե հետո:**

• Հետո (Մարկոս 14:12-17)

«12Եւ Բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ զատկի գառն էին մորթում, աշակերտները նրան ասացին. «Ո՞ւր ես ուզում գնանք պատրաստենք, որ զատկական ընթրիքն ուտես»: 13Եւ նա աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց.

«Գնացէ՛ք այն քաղաքը եւ երբ այն քաղաքը մտնէք, կը պատահի ձեզ

մի մարդ, որ ուսին ջրի սափոր
ունի. գնացէ՛ք նրա յետեւից: 14Եւ
նա ո՛ր տունը որ մտնի,
տանտիրոջը կ'ասէք.

«Վարդապետն ասում է՝ ո՛ւր է այն
իջեւանը, ուր իմ աշակերտների
հետ զատկական ընթրիքը պիտի
ուտեն»: «15Եւ նա ձեզ ցոյց կը
տայ զարդարուած մի վերնատուն.
այնտե՛ղ պատարաստեցէք մեզ
համար»: 16Եւ նրա աշակերտները
գնացին պատրաստելու. եկան այն
քաղաքը եւ գտան՝ ինչպէս որ նա
իրենց ասել էր. ու զատկական
ընթրիքը պատրաստեցին: 17Երբ
երեկոյ եղաւ, նա եկաւ
Տասներկուսի հետ միասին:»

• Առաջ. Հուդան դուրս եկավ
գիշերը (Հովհաննէս 13:30) Մյուս

աշակերտները կարծեցին, որ նա դուրս է գալիս գնելու պարեն Չատիկի ընթրիքը պատրաստելու համար (**Հովհաննես 13:20**): Երբ Հիսուսին ձերբակալեցին, հրեաները չմտան Պիղատոսի դատի դահլիճը, **որովհետև նրանք ուզում էին անպիղծ մնալ Չատիկի ընթրիքի համար:**(**Հովհաննես 18:28**) Երբ հայտարարվեց Հիսուսին դեմ դատավճիռը, **Չատիկի Պատրաստման օրվա ժամը վեցն էր:** (**Հովհաննես 19:14**)

«30Իսկ նա պատառը վերցնելով՝ իսկոյն դուրս ելաւ: Եւ գիշեր էր...»

«20Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ ընդունի նրան, ում ես կ'ուղարկեմ, ինձ է ընդունում, եւ

ով ինձ է ընդունում, ընդունում է նրան, ով ինձ ուղարկեց»:

«28Կայիափայի տնից Յիսուսին տարան կուսակալի ապարանքը: Այգաբաց էր: Բայց նրանք ապարանք չմտան, որպեսզի չպղծուեն եւ որպեսզի զատկական ընթրիքը կարողանան ուտել:»

«14Իսկ երբ Պիղատոսը այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերեց, նստեց բեմի վրայ, այն տեղը, որ Քարայատակ էր կոչւում, իսկ եբրայերէն՝ Կապապաթա:»

70. Արդյո՞ք Հիսուսը աղոթեց Հորը, [խաչելությունը կանխելու համար](#):

- Այն (Մատթեոս 26:39, Մարկոս 14:36, Դուկաս 22:42)

«39Եւ մի փոքր առաջ գնալով՝ ընկաւ իր երեսի վրայ, աղօթեց ու ասաց. «Հայր իմ, եթէ կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու»:

«36Եւ ասում էր. «Աբբա՛, Հայր, ամէն ինչ քեզ կարելի է. այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ ինչպէս ե՛ս եմ կամենում, այլ՝ ինչպէս դո՛ւ ես կամենում»:

«42«Հայր, եթէ կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ իմ կամքը, այլ քո՛նը թող լինի»:

- Ոչ. (Հովհաննես 12:27)

«27Բայց այժմ հոգիս խռովուած է. եւ ի՞նչ ասեմ. Հայր, փրկի՛ր ինձ այս ժամից: Բայց ես հէնց այս քանի համար եմ եկել այս ժամին:»

71.Ավետարաններում, որտեղ ասվում է, որ Հիսուսը աղոթեց խուսափելու խաչվելուց, քանի՞ անգամ, «նա հեռացավ իր աշակերտներից աղոթելու:»

- Երեք (Մատթեոս 26:36-46 և Մարկոս 14:32-42)

«36Այն ժամանակ Յիսուս նրանց հետ եկաւ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, եւ նրանց ասաց. «Նստեցէ՛ք այդտեղ, մինչեւ որ զնամ աղօթեմ»: 37Եւ իր հետ

վերցնելով Պետրոսին եւ
 Չերեդէնոսի երկու որդիներին՝
 սկսեց տրտմել եւ
 տազնապել: 38 Այն ժամանակ
 նրանց ասաց. «Հոգիս տխուր է
 մահու չափ. այստէ՛ղ մնացէ՛ք եւ
 ինձ հետ հսկեցէ՛ք»: 39 Եւ մի փոքր
 առաջ գնալով՝ ընկաւ իր երեսի
 վրայ, աղօթեց ու ասաց. «Հա՛յր
 իմ, եթէ կարելի է, այս բաժակը
 թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝
 ինչպէս ես եմ կամենում, այլ՝
 ինչպէս դու»: 40 Նա եկաւ
 աշակերտների մօտ եւ նրանց քնի
 մէջ գտաւ ու Պետրոսին ասաց.
 «Այդպէ՛ս, չկարողացա՛ք մէկ ժամ
 արթուն մնալ ինձ հետ:

«32 Եկան այն տեղը, որը
 Գերսեմանի էր կոչւում: Եւ նա

աշակերտներին ասաց. «Նստեցէ՛ք
այստեղ, մինչեւ ես աղօթեմ»:33Եւ
նա իր հետ վերցրեց Պետրոսին,
Յակոբոսին եւ Յովհաննէսին եւ
սկսեց տխրել ու տազնապել:34Այն
ժամանակ նրանց ասաց. «Տխուր
է հոգիս մեռնելու աստիճան.
մնացէ՛ք այստեղ եւ արթո՛ւն
կացէք»:35Եւ փոքր-ինչ առաջ
գնալով՝ երեսի վրայ ընկաւ գետին.
եւ աղօթում էր, որ, եթէ կարելի է,
այդ ժամը իրենից հեռանայ:36Եւ
ասում էր. «Աբբա՛, Հա՛յր, ամէն ինչ
քեզ կարելի է. այս բաժակը ինձնից
հեռացրո՛ւ, բայց ոչ թէ ինչպէս ե՛ս
եմ կամենում, այլ՝ ինչպէս դո՛ւ ես
կամենում»:

49Ես միշտ ձեզ մօտ էի եւ
ուսուցանում էի տաճարում. եւ

ինձ չբռնեցիք. բայց այս եղաւ,
որպէսզի մարգարէների
Գրուածքները կատարուեն»:

50Այն ժամանակ աշակերտները
բոլորն էլ լքեցին նրան եւ փախան:

51Եւ մի երիտասարդ գնում էր
նրա յետեւից՝ իր մերկ մարմնի
վրայ մի սաւան գցած:

Երիտասարդները նրան բռնեցին,

52եւ նա թողնելով հագի կտորը՝

մերկ փախաւ նրանցից: 53Եւ

Յիսուսին տարան Կայիափա

քահանայապետի մօտ. եւ նրա

հետ հաւաքուած էին բոլոր

քահանայապետները,

օրէնսգէտներն ու ծերերը:

37Եւ Յիսուս եկաւ ու նրանց քնած
գտաւ. եւ Պետրոսին ասաց.

«Միմո՛ն, ննջո՛ւմ ես.

չկարողացա՞ր մէկ ժամ արթուն
 մնալ: 38 Արթո՛ւն կացէք եւ
 աղօթեցէ՛ք, որպէսզի
 փորձութեան մէջ չընկնէք: Հոգին
 յօժար է, բայց մարմինը՝
 տկար»: 39 Եւ նորից գնաց,
 աղօթքի կանգնեց ու նոյն բաներն
 ասաց: 40 Կրկին անգամ դարձաւ
 այնտեղ եւ նրանց քնի մէջ գտաւ.
 որովհետեւ նրանց աչքերը
 ծանրացել էին, եւ չէին իմանում,
 թէ ինչ պատասխան տան
 նրան: 41 Երրորդ անգամ եկաւ եւ
 նրանց ասաց. «Քնեցէ՛ք
 այսուհետեւ եւ հանգստացէ՛ք,
 քանի որ վախճանը հասել էկաւ
 ժամը, եւ ահա մարդու Որդին
 մատնւում է մեղաւորների ձեռքը:
 42 Օ՛ն, վե՛ր կացէք գնանք,

որովհետեւ ահա մօտեցաւ նա, ով
ինձ մատնելու է»:

51Եւ ահա Յիսուսի հետ
գտնուողներից մէկը ձեռքը
երկարեց եւ իր սուրը հանեց ու
հարուածեց քահանայապետի
ծառային եւ նրա ականջը կտրեց
պոկեց:52Այն ժամանակ Յիսուս
նրան ասաց. «Քո սուրը ետ դիր
իր տեղը, որովհետեւ, ովքեր սուր
են վերցնում, սրով կ'ընկնեն:53Եւ
կամ կարծո՞ւմ ես, թէ չեմ կարող
ին Հօրն աղաչել, որ նա հիմա ինձ
համար այստեղ հասցնի
հրեշտակների աւելի քան
տասներկու գնդեր: 54Եւ ինչպէ՞ս
պիտի կատարուէին Սուրբ
Գրքերում գրուածները, թէ՛
այսպէս պէտք է լինի»:55Այն

ժամանակ Յիսուս ամբողջին
ասաց. «Սրերով եւ մահակներով
իմ դէմ էք ելել՝ բռնելու ինձ իբրեւ
մի աւազակի՞: Միշտ ձեզ մօտ,
տանարում նստում էի եւ
ուսուցանում, ու ինձ չբռնեցիք.

«41 Արթո՛ւն մնացէք եւ աղօ՛թք
արէք, որպէսզի փորձուիքեան մէջ
չընկնէք. հոգիս յօժար է, բայց
մարմինս՝ տկար»:42 Դարձեալ,
երկրորդ անգամ, Յիսուս գնաց
աղօթքի կանգնեց ու ասաց.

«Հա՛յր իմ, եթէ կարելի չէ, որ այս
բաժակը ինձնից հեռու անցնի,
ապա այն կը խմեմ. քո կա՛մքը թող
լինի»:43 Եւ գալով՝ դարձեալ
նրանց քնի մէջ գտաւ, որովհետեւ
նրանց աչքերը ծանրացել
էին:44 Թողեց նրանց ու երրորդ

անգամ գնաց աղօթքի կանգնեց.
 Եւ դարձեալ նոյն խօսքն
 ասաց:45Այն ժամանակ եկաւ
 աշակերտների մօտ ու նրանց
 ասաց. «Ննջեցէ՛ք այսուհետեւ ու
 հանգստացէ՛ք, քանի որ ահա
 ժամը հասել է, եւ մարդու Որդին
 մեղաւորների ձեռքն է մատնուում,

«46Վե՛ր կացէք գնանք այստեղից.
 որովհետեւ ահա հասաւ նա, ով
 ինձ մատնելու է»:»

• Մեկ. Ոչինչ չի ասվում մյուս
 երկու անգամվա մասին:(Դուկաս
 22:39-46)

«39Եւ Յիսուս ըստ իր
 սովորութեան եկաւ գնաց
 Ձիթենեաց լեռը. նրա յետեւից
 գնացին եւ աշակերտները: 40Երբ

տեղ հասաւ, ասաց նրանց.
 «Աղօթքի՛ կանգնեցէք, որ
 փորձուիթեան մէջ չընկնէք»:41 Եւ
 ինքը հեռացաւ նրանցից մօտ մի
 քարընկեց, ծնրադրեց, աղօթում
 էր եւ ասում.42 «Հա՛յր, եթէ
 կամենում ես, այս բաժակը
 ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ իմ
 կամքը, այլ քո՛նը թող լինի»: «43 Եւ
 նրան երկնքից երեւաց մի
 հրեշտակ եւ ուժ էր տալիս նրան.
 նա տագնապի մէջ էր եւ ամբողջ
 հոգով էր աղօթում:44” Եւ նրանից
 քրտինքը հոսում էր արեան
 կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին
 թափուելով:45 Եւ վեր կենալով
 աղօթքից՝ եկաւ աշակերտների
 մօտ, նրանց քնած գտաւ
 տրտմութիւնից46 Եւ նրանց ասաց.
 «Ինչո՞ւ էք քնել. վե՛ր կացէք,

աղօթեցէ՛ք, որպէսզի
փորձուիքեան մէջ չընկնէք»:

**72. Մատթեոսը և Մարկոսը
համամիտ են, որ Հիսուսը գնաց
և աղօթեց երեք անգամ: Որո՞նք
էին երկրորդ աղօթքի խոսքերը:**

• Մարկոսը չի ասում խոսքերը,
սակայն նա ասում է, որ դրանք
նույն են, **ինչ առաջին աղօթքում:**
(Մարկոս 14:39)

«39Եւ նորից գնաց, աղօթքի
կանգնեց ու նոյն բաներն ասաց:»

• Մատթեոսը ասում է մեզ
խոսքերը և մենք կարող ենք
տեսնել, որ դրանք նույնը չեն,
ինչպէս առաջին աղօթքում:
(Մատթեոս 26:42)

«42Դարձեալ, երկրորդ անգամ, Յիսուս գնաց աղօթքի կանգնեց ու ասաց. «Հայր իմ, եթէ կարելի չէ, որ այս բաժակը ինձնից հեռու անցնի, ապա այն կը խմեմ. քո կա՛մքը թող լինի»։»

73. Ի՞նչ ասաց հարիւրապետը, երբ Հիսուսը մահացավ:

• «Իրավմամբ այս մարդը անմեղ էր:» (Դուկաս 23:47)

«47Եւ հարիւրապետը, տեսնելով ինչ որ պատահեց, փառաւորեց Աստծուն եւ ասաց. «Իսկապէս այս մարդը արդար էր»:

• «Իրավմամբ, այս մարդը Աստծո Որդին էր:» (Մարկոս 15:39)

«39Եւ այնտեղ կանգնած
հարիւրապետը տեսնելով, թէ
ինչպէս նա աղաղակեց եւ հոգին
աւանդեց, ասաց. «Իրօք այս
մարդը Աստծու Որդի էր»:

**74. Երբ Հիսուսը ասաց. “Իմ
Տեր, իմ Տեր, ինչու՞ ես դու ինձ
լքել» ի՞նչ լեզվով նա խոսեց:**

• Եբրայերեն, խոսքերն են “Էլի՛,
Էլի՛....» (Մատթեոս 27:46)

«46Ժամը երեքի մօտ Յիսուս
բարձր ձայնով գոչեց ու ասաց.
«Էլի՛, Էլի՛, լա՛մա սարաքթանի»,
այսինքն՝ Աստուած իմ, Աստուած
իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ:

• Արամերեն. խոսքերն էին
«Էլի՛, Էլի՛...» (Մարկոս 15:34)

«34Եւ ժամը երեքին Յիսուս քարձրածայն աղաղակեց եւ ասաց. «Էլի՛, Էլի՛, լա՛մա սաքաքթանի», որ թարգմանուում է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ:»

75. Ըստ Ավետարանների, ո՞րն էին Հիսուսի խոսքերը մահից առաջ:

• “Հայր, քո ձեռքն եմ ես հանձնում իմ հոգին:» (Ղուկաս 23:46)

«46Եւ Յիսուս քարձրածայն աղաղակեց եւ ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին»: Երբ այս ասաց, **հոգին աւանդեց:**»

- “Ավարտվեց » (Հովհաննես 19:32)

«32«Ամէն ինչ կատարուած է»: Եւ գլուխը կախելով՝ հոգին աւանդեց:»

76.Երբ Հիսուս մտավ Կափառնա, նա բժշկեց հարյուրապետի սարուկին: Արդո՞ր հարյուրապետը ինքն անձամբ եկավ խնդրելու Հիսուսին այդ մասին:

- Այո (Մատթեոս 8:5)

«5Կափառնայում մտնելիս նրան մօտեցաւ մի հարիւրապետ. աղաչում էր նրան,»

• Ոչ. Նա ուղարկեց մի քանի հրեա ավագների և իր ընկերներին (Ղուկաս 7:3,6)

«Յերբ լսեց Յիսուսի մասին, հրեաներից ավագներին ուղարկեց, որ աղաչեն նրան, որպէսզի գայ եւ բժշկի իր ծառային:»

«6Յիսուս գնաց նրանց հետ. երբ տնից շատ հեռու չէր, հարիւրապետը նրա մօտ բարեկամներ ուղարկեց՝ ասելով. «Տէ՛ր, նեղութիւն մի՛ կրիր, որովհետեւ արժանի չեմ, որ իմ յարկի տակ մտնես.»

- Աղամին ասվեց, որ եթե և երբ նա ճաշակի արգելված պտուղը, նա կմահանա նույն օրը: (Ծննդոց 2:17)

«17բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերէք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք»:

- Աղամը ճաշակեց պտուղը և շարունակեց ապրել մինչ խոր ծերություն, 930 տարի: (Ծննդոց 5:5)

«5Աղամը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր երեսուն տարի:»

- Աստված որոշեց, որ մարդ արարածի կյանքի տևողությունը կլինի սահմանափակված մինչ 120 տարի. (Ծննդոց 6:3)

«ՅՏէր Աստուած ասաց. «Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետեւ նրանք մարմնաւոր են: Նրանց կեանքի սահմանը թող լինի հարիւր քսան տարի»:»

- Այդ բանից հետո ծնված շատերը ապրեցին 120 տարուց ավել: Արփաքսադը ապրեց 438 տարի: Նրա որդի Սաղան ապրեց 433 տարի: Նրա որդի Եբերը ապրեց 464 տարի և այլն: (Ծննդոց 11:12-16)

«12Արփաքսադը հարիւր
երեսունհինգ տարեկան
հասակում ծնեց Կայնանին:
13Արփաքսադը Կայնանին
ծնելուց յետոյ ապրեց եւս չորս
հարիւր տարի, ծնեց ուստրեր ու
դուստրեր եւ մեռաւ: Կայնանը
հարիւր երեսուն տարեկան
հասակում ծնեց Սաղային:
Կայնանը Սաղային ծնելուց յետոյ
ապրեց եւս երեք հարիւր երեսուն
տարի, ծնեց ուստրեր ու
դուստրեր եւ մեռաւ: 14Սաղան
հարիւր երեսուն տարեկան
հասակում ծնեց
Եբերին: 15Սաղան Եբերին
ծնելուց յետոյ ապրեց եւս երեք
հարիւր երեսուն տարի, ծնեց
ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ:
16Եբերը հարիւր երեսունչորս

տարեկան հասակում ծնեց
Փաղէկին:»

**79. Արդո՛ք Հիսուսից բացի
որևէ այլ մեկը համբարձվեց
երկինք:**

• Ոչ (Հովհաննես 3:13)

«13Արդ, ոչ ոք երկինք չի ելել, եթէ
ոչ նա, որ իջաւ երկնքից՝ մարդու
Որդին, որ երկնքից էր:»

• Այո. «Եվ Եղիան մրրիկի մեջ
համբարձվեց երկինք:»
(Թագավորաց Դ 2:11)

«11Մինչ նրանք քայլում էին, մի
հրեղէն կառք ու հրեղէն
երիվարներ երեւացին, նրանց
միմեանցից բաժանեցին, **և**

Եղիան պտտահողմի մէջ դէպի
երկինք վերացաւ:»

**80. Ո՛վ էր քահանայապետը,
երբ Դավիթը գնաց Աստծո
տուն և ճաշակեց նվիրաբերված
հացը:**

- Աբիաթարը (Մարկոս 2:26)

«26թէ ինչպէս Աբիաթար
քահանայապետի օրով մտաւ
Աստծու տունը եւ կերաւ
առաջաւորութեան հացը՝ տալով
նաեւ նրանց, որ իր հետ էին. մի
բան, որ, բացի քահանաներից,
ուրիշների համար օրինաւոր չէր
ուտել»

- Աբիմելեքը, Աբիաթարի հայրը
(Թագավորաց Ա 1:1; 22:20)

«1Արիմաթէմ Սիբայից՝ Եփրեմի լեռից եկած Եղկանա անունով Նասիբ Եփրեմցի մի մարդ կար: Նա Թոկիի որդի Հեղիի որդի Յերեմիելի որդին էր:»

«20Աքիտոբի որդի Աքիմելէքի մի որդին փրկուեց: Նրա անունն էր Աքիաթար: Նա փախաւ Դաւթի մօտ:»

81. Արդյո՞ք, ըստ հրեական ավանդույթների, հուդարկավորումից առաջ Հիսուսի մարմինը պատված էր անուշաբույրերով:

- Այո և նրա աշակերտուհիները վկա եղան նրա հուդարկավորմանը: (Հովհաննես 19:39-40)

“39Եւ դարձեալ միւս գրուածն
ասուն է. «Պիտի նայեն նրան, ում
խոցեցին»: 40Այնուհետեւ
Յովսէփը, որ արիմաթիացի էր եւ
Յիսուսի թաքուն աշակերտն էր
հրեաների վախի պատճառով,
Պիղատոսին աղաչեց, որ Յիսուսի
մարմինը վերցնի: Եւ Պիղատոսը
հրաման տուեց. ուստի Յովսէփն
ու Նիկողեմոսը եկան եւ նրան
վերցրին:»

• Ոչ. Հիսուսը փաթաթված էր
սպիտակ սավանով: Այնուհետ
կանայք բերեցին և
պատրաստեցին անուշաբույրեր,
“այնպես որ նրանք կարող էին
գնալ և օժել նրան, Հիսուսին »
(Մարկոս 16:1)

«1Եւ երբ շաբաթն անցաւ,
Մարիամ Մագդաղենացին,
Յակորոսի մայր Մարիամը եւ
Սաղոմէն գնացին խնկի
պատրաստութիւն տեսան,
որպէսզի գան եւ օծեն նրա
մարմինը:»

82. Ե՛րբ էին կանայք գնել անուշաբուկր:

- Շաբաթից հետո (Մարկոս
16:1)

«1Եւ երբ շաբաթն անցաւ,
Մարիամ Մագդաղենացին,
Յակորոսի մայր Մարիամը եւ
Սաղոմէն գնացին խնկի
պատրաստութիւն տեսան,
որպէսզի գան եւ օծեն նրա
մարմինը:»

• Շարքաթից առաջ. **Կանայք**
“**պատրաստել էին**
անուշաբույրերը և քսուկները:»
Այնուհետ, «Շարքաթ օրը, ըստ
պատվիրանի, նրանք
հանգստացան:» (Ղուկաս 23:55
մինչ 24:1)

“55Եւ Յովսէփի յետեւից գնում
էին կանայք, որոնք Քալիլիայից
էին եկել Յիսուսի հետ. նրանք
տեսան գերեզմանը, եւ թէ ինչպէս
նրա մարմինը այնտեղ դրուեց:
56Վերադարձան, խնկեր եւ իւղեր
պատրաստեցին ու շարքաթ օրը,
օրէնքի համաձայն, հանգիստ
արեցին:» “1Բայց կիրակի օրը,
առաւօտեան շատ վաղ, կանայք
գերեզման եկան՝ բերելով իրենց

պատրաստած խնկերը. նրանց հետ եւ ուրիշ կանայք:»

83. Օրվա ո՞ր ժամին կանայք այգելեցին գերեզմանը:

• «Լուսաբացին մոտ»
(Մատթեոս 28:1)

«1 Շաբաթ օրուայ երեկոյեան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու:»

• «Երբ արևը ծագել էր »
(Մարկոս 16:2)

«2 Եւ կիրակի օրը, առաւօտեան, արեւածագին եկան գերեզման:»

84.Ո՞րն էր կանանց գերեզման գնալու պատճառը:

• Օձելու Հիսուսի մարմինը անուշաբույրերով (Մարկոս 16:1; Դուկաս 23:55 մինչև 24:1)

«1Եւ երբ շաբաթն անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը եւ Սաղոմէն գնացին խնկի պատրաստութիւն տեսան, որպէսզի գան եւ օձեն նրա մարմինը:»

«55Եւ Յովսէփի յետեւից գնում էին կանայք, որոնք Քալիլիայից էին եկել Յիսուսի հետ. նրանք տեսան գերեզմանը, եւ թէ ինչպէս նրա մարմինը այնտեղ դրուեց: 56Վերադարձան, խնկեր եւ իւղեր

պատրաստեցին ու շարաթ օրը, օրէնքի համաձայն, հանգիստ արեցին:» «1Բայց կիրակի օրը, առաւօտեան շատ վաղ, կանայք գերեզման եկան՝ բերելով իրենց պատրաստած խնկերը. նրանց հետ եւ ուրիշ կանայք:»

• Տեսնելու գերեզմանը: Այստեղ ոչինչ չի ասվում անուշաբույրերի մասին: (Մատթեոս 28:1)

«1Բայց կիրակի օրը, առաւօտեան շատ վաղ, կանայք գերեզման եկան՝ բերելով իրենց պատրաստած խնկերը. նրանց հետ եւ ուրիշ կանայք:»

• Առանց որևէ պատճառի: Ըստ այս ավետարանի, [անուշաբույրերով պատելը](#)

կատարվել է Ճարբաթից առաջ:
(Հովհաննես 20:1)

«1Եւ կիրակի օրը Մարիամ
Մագդաղենացին առաւօտեան
արշալոյսին գերեզման է գալիս եւ
տեսնում է, որ քարը գերեզմանի
դռնից վերցուած է:»

**85. Գերեզմանի մուտքի մեծ
քարը տեղաշարժվել էր: Որտե՞ր
էր քարը, երբ կանայք
ժամանեցին:**

• Նրանք տեսան, որ քարը «Ետ
էր գլորված» (Մարկոս 16:4)
Նրանք գտան քարը “ետ գլորված
գերեզմանից » (Դուկաս 24:2)
Նրանք տեսան, որ «քարը
վերցված էր գերեզմանից:»
(Հովհաննես 20:1)

«4Եւ նայեցին ու տեսան, որ գերեզմանից քարը գլորուած էր. եւ այն շատ մեծ էր:»

«2Եւ քարը գերեզմանից գլորած գտան:»

«1Եւ կիրակի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտեան արշալոյսին գերեզման է գալիս եւ տեսնում է, որ քարը գերեզմանի դռնից վերցուած է:»

• Երբ կանայք մոտեցան, հրեշտակ իջավ երկնքից, գլորեց քարը և զրուցեց կանանց հետ: Մատթեոսը կանանց վկա դրածրեց քարի գլորվելուն: (Մատթեոս 28:1-6)

«1 Շարաթ օրուայ երեկոյեան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: 2 Եւ ահա մեծ երկրաշարժ եղաւ, որովհետեւ Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մօտեցաւ, դռնից վեմը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրայ: 3 Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպէս ձիւնը: 4 Նրա ահից պահապանները խռովուեցին եւ մեռելների պէս եղան: 5 Հրեշտակը խօսեց ու կանանց ասաց. «Դուք մի՛ վախեցէք, գիտեմ, որ փնտռում էք Յիսուսին, որ խաչուեց. ճայստեղ չէ նա, քանի որ յարութիւն առաւ, ինչպէս ինքն

ասել էր. եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը,
ուր պատկած էր:»

86. Արդյո՞ք որևէ մեկը ասաց կանանց, թե ինչ է պատահել Հիսուսի մարմնի հետ:

• Այո «Մի երիտասարդ
սպիտակ զգեստով» (Մարկոս 16:5
) : «Երկու տղամարդ...փայլփլող
հագուստով » որոնք հետագայում
նկարագրվել են որպես
հրեշտակներ (Դուկաս 24:4 և
24:23) Հրեշտակ, մեկը, ով գլորեց
ետ քարը (Մատթեոս 16:2)
Յուրաքանչյուր պարագայում,
կանանց ասվել է, որ Հիսուսը
համբարձվել է մեռյալներից
(Մատթեոս 28:7; Մարկոս 16:6;
Դուկաս 24:5, ծանոթագրություն)

«5Եւ ներս, գերեզման մտնելով՝ տեսան մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմունճան հագած. եւ զարհուրեցին»

«4Եւ մինչ նրանք զարմացած էին այդ բանի վրայ, ահա լուսաւոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մօտ: »

«23Եւ նրա մարմինը չէին գտել. նրանք եկան եւ ասացին, թէ նաեւ մի տեսիլ էլ էին տեսել հրեշտակների, որոնք ասում էին նրա մասին, թէ կենդանի է:»

«2Իսկ նա պատասխան տուեց եւ ասաց նրանց.»

«7Եւ իսկոյն զնացէ՛ք, ասացէ՛ք նրա աշակերտներին, թէ յարութիւն առաւ. եւ ահա նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտեղ նրան կը տեսնէք: Ահա ասացի ձեզ»:»

«6Եւ նա ասաց նրանց. «Մի՛ վախեցէք, դուք Յիսուսին էք փնտռում՝ իսաչուած Նազովրեցուն. նա յարութիւն առաւ, այստեղ չէ: Ահաւասիկ այն տեղը, ուր նրան դրել էին:»

«5Եւ երբ կանայք զարհուրեցին ու իրենց երեսը գետին խոնարհեցրին, մարդիկ ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մէջ էք փնտռում:»

• Ոչ. Մարիամը որ որի
չհանդիպեց և վերադարձավ
ասելով. «Նրանք տարել են
Տիրոջը գերեզմանից և մենք
չգիտենք, **թե որտեղ են նրանք
դրել նրան:»** (Հովհաննես 20:2)

«ՉԱպա վազում է եւ գալիս Սիմոն
Պետրոսի եւ այն միւս աշակերտի
մօտ, որին Յիսուս սիրում էր, ու
նրանց ասում է. «Տիրոջը վերցրել
են գերեզմանից, եւ չգիտենք, թե
ո՛ր են դրել նրան»:»

**87. Ե՛րբ Մարիամ
Մարգդադենացին, առաջին
անգամ հանդիպեց հարուրթուն
առած Հիսուսին: Եվ ինչպե՛ս նա
արձագանքեց:**

• Մարիամը և մյուս կանայք հանդիպեցին Հիսուսին, երբ վերադառնում էին գերեզմանից, որը այցելեցին առաջին և միակ անգամ: Նրանք փարվեցին նրա ոտքերին և երկրպագեցին նրան: (Մատթեոս 28: 9)

«ԳԵԼ յանկարծ Յիսուս նրանց դիմացը ելաւ ու ասաց՝ ողջո՛յն ձեզ. եւ նրանք մօտենալով՝ նրա ոտքերին փարուեցին ու երկրպագեցին նրան:»

• Գերեզմանի երկրորդ այցելութեան ժամանակ, Մարիամը հանդիպեց Հիսուսին, **անմիջապես դուրսը:** Երբ նա տեսավ Հիսուսին, **նա նրան չճանաչեց:** Նա սխալմամբ կարծեց, **որ նա այգեպանն է:** Նա

դեռ կարծում էր, որ Հիսուսի մարմինը հանգստանում էր որևէ տեղ և նա պահանջում էր իմանալ թե որտեղ: Մակայն, երբ Հիսուսը ասաց նրա անունը, նա անմիջապես ճանաչեց նրան և կոչեց նրան «Ուսուցիչ»: Հիսուսն ասաց նրան, «Մի մոտեցիր ինձ...» (Հովհաննես 20:11-17)

«11Բայց Մարիամը կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում. եւ մինչ դեռ լաց էր լինում, կռացաւ դէպի գերեզմանը» 12Եւ տեսաւ երկու հրեշտակներ՝ սպիտակների մէջ, որոնք նստել էին՝ մէկը՝ սնարին, եւ միւսը՝ ոտքերի մօտ, այնտեղ, ուր Յիսուսի մարմինն էր եղել: 13Եւ նրան ասացին. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես

լալիս»։ Նա նրանց ասաց.
 «Որովհետեւ իմ Տիրոջը
 գերեզմանից վերցրել են, եւ
 չգիտեմ՝ նրան ուր են դրել»։ 14Երբ
 այս ասաց, դէպի յետելի կողմը
 դարձաւ եւ տեսաւ Յիսուսին, որ
 կանգնած էր. բայց չէր իմանում,
 թէ Յիսուսն է։ 15Յիսուս նրան
 ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս,
 ո՞ւմ ես փնտռում»։ Նրան այնպէս
 թուաց, թէ պարտիզպանն է. եւ
 ասաց նրան. «Տէ՛ր, եթէ դու ես
 նրան վերցրել, ասա՛ ինձ՝ ուր ես
 դրել նրան, որպէսզի ես նրան
 վերցնեմ»։ 16Յիսուս նրան ասաց՝
 Մարիա՛մ։ Եւ նա դարձաւ ու
 երբայերէն նրան ասաց՝
 Ռաբբունի՛ (որ թարգմանւում է՝
 վարդապետ)։ 17Յիսուս նրան
 ասաց. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի

որ դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դեպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»։»

88. Ի՞նչ հրահանգներ տվեց Հիսուսը իր աշակերտներին:

• «Ասեք իմ եղբայրներին գնալ Գալիլեա և այնտեղ նրանք կտեսնեն ինձ» (Մատթեոս 28:10)

«10Այն ժամանակ Յիսուս նրանց ասաց. «Մի՛ վախեցեք. գնացե՛ք ասացեք իմ եղբայրներին, որ գնան Գալիլիա եւ այնտեղ ինձ տեսնեն»։»

• “Գնացեք իմ եղբայրների մոտ
և ասացեք նրանց: Ես
բարձրանում եմ իմ Հոր և ձեր Հոր
մոտ, **իմ և ձեր Աստծո մոտ:»**
(Հովհաննես 20:17)

«17Յիսուս նրան ասաց. «Ինձ մի՛
մօտեցիր, քանի որ դեռ Հօրս մօտ
չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու
իմ եղբայրների մօտ ու նրանց
ասա՛, որ ես բարձրանում եմ դեպի
իմ Հայրը եւ ձեր Հայրը, դեպի իմ
Աստուածը եւ ձեր Աստուածը»:

89. Ե՛րբ աշակերտները վերադարձան Գալիլեա:

• Անմիջապես, որովհետև երբ
նրանք տեսան Հիսուսին
Գալիլեայում, «**ոմանք
կասկածեցին»** (Մատթեոս 28:17)

Այս տեսակի անորոշությունը
չպետք է լիներ:

«17Իսկ տասնմեկ աշակերտները
գնացին Գալիլիա, այն լեռը, ուր
Յիսուս իրենց հետ ժամադրուել
էր:»

• Ամենաքիչը քառասուն օր
հետո: Այդ երեկո, **աշակերտները
դեռ Երուսաղեմում էին: (Ղուկաս
24:33)** Հիսուսը երևաց նրանց
այնտեղ և ասաց մնալ քաղաքում,
մինչ նրանց վրա կիջնի երկնային
հզորություն (Ղուկաս 24:49) Նա
հայտնվում էր նրանց **«քառասուն
օրվա ընթացքում» (Գործք 1:3)** և
ասում էր նրանց չհեռանալ
Երուսաղեմօից, այլ սպասել
խոստմանը... (Գործք 1:4)

«33 Ապա անմիջապես վեր կացան ու Երուսաղէմ վերադարձան եւ հաւարուած գտան Տասնմէկին եւ նրանց հետ եղածներին:»

90. Ու՛մ վաճառեցին Յովսէփին Մադիանացիները:

• «Իսմայելացիներին» (Ծննդոց 37:28)

«28 Այնտեղից անցնում էին մադիանացի վաճառականներ: Եղբայրները Յովսէփին քաշեցին-հանեցին հորից եւ քսան դահեկանով վաճառեցին իսմայելացիներին:»

• «Պետափրեսին, Փարավոնի ներքինին » (Ծննդոց 37:36)

«36Իսկ մադիանացիները
Եզիպտոսում Յովսեփին
վաճառեցին փարաւոնի
դահնապետին՝ ներքինի
Պետափրէսին:»

91. Ո՛վ բերեց Հովսեփին Եզիպտոս:

• Իսմայելացիները գնեցին
Հովսեփին և այնուհետ «տարան
Հովսեփին Եզիպտոս» (Ծննդոց
37:28-29)

«28Այնտեղից անցնում էին
մադիանացի վաճառականներ:
Եղբայրները Յովսեփին քաշեցին-
հանեցին հորից եւ քսան
դահեկանով վաճառեցին
իսմայելացիներին:
29Իսմայելացիները Յովսեփին

տարան Եզիպտոս: Ռուբէնը վերադարձաւ դէպի հորը եւ Յովսէփին հորի մէջ չգտաւ:»

• «Մադիանացիները վաճառեցին նրան Եզիպտոսում»
(Ծննդոց 37:36)

«36Իսկ մադիանացիները Եզիպտոսում Յովսէփին վաճառեցին փարաւոնի դահնապետին՝ ներքինի Պետափրէսին:»

• Հովսէփը ասաց իր եղբորը «Ես քո եղբայրն եմ, Հովսէփը, ում դուք վաճառեցիք Եզիպտոս»
(Ծննդոց 45:4)

«4Յովսէփն ասաց եղբայրներին.
«Մօտեցէ՛ք ինձ»: Նրանք մօտ

գնացին: Յովսէփն ասաց. «Ես ձեր
եղբայր Յովսէփն եմ, որին դուք
վաճառեցիք, որ Եգիպտոս
տանեն:»

92. Արդյո՞ր Աստված գղջում է:

• Այո “Տիրոջ խոսքը եկավ
Սամուէլին. «Ես գղջում եմ, որ
Սավուդին Արքա եմ օծել... »
(Թագավորաց 15:10 մինչև11)

«10Տէրը խօսքն ուղղեց
Սամուէլին՝ ասելով. «Չղջացել եմ,
որ թագաւոր եմ օծել Սաւուդին,
քանզի ինձնից շուռ է եկել եւ իմ
խօսքերը չի պահել»:

• Ոչ. Աստված «չի ստի կամ
գղջա, քանի որ նա մարդ չէ, որ

կարողանա զղջալ» (Թագավորաց
Ա 15:29)

«29Իսրայելը երկու մասի է
բաժանուելու, եւ Տէրն իր խօսքից
յետ չի դառնալու ու չի զղջալու,
քանզի նա մարդ չէ, որ զղջայ:»

· Այո “Եվ Տէրը զղջաց, որ օծել
է Սաւուդին Արքա Իսրայելի վրա
» (Թագավորաց Ա 15:35)

«35Սամուէլը մինչեւ իր մահուան
օրը այլեւս չտեսաւ Սաւուդին,
քանզի Սամուէլը Սաւուդի համար
սուգ էր անում: Եւ Տէրը զղջացել
էր, որ Սաւուդին թագաւոր էր օծել
Իսրայելի վրայ:»

Հաշվի առեք, որ վերոհիշյալ բոլոր
մեջբերումները նույն գրքի, [նույն](#)

գլխից են: Որպես լրացում,
Աստվածաշունչը ցույց է տալիս,
որ Աստված զղջում է այլ
պարագաներում.

1. “Տերը զղջում էր, որ արարեց
մարդուն » (Ծննդոց 6:6) «Ես
զղջում եմ, որ ես արարել եմ
նրանց:» (Ծննդոց 6:7)

«6զղջաց Աստուած, որ մարդ է
ստեղծել երկրի վրայ, եւ տրտմեց
իր հոգու խորքում:»

«7Տէր Աստուած ասաց. «Երկրի
երեսից վերացնելու եմ իմ
ստեղծած ամէն մի էակ՝ մարդուց
մինչեւ անասուն եւ սողուններից
մինչեւ երկնքի թռչունները,
որովհետեւ զղջացել եմ, որ
ստեղծել եմ նրանց»:

2. “Եվ Տերը զղջաց չարիքի համար, **որ սպառնում էր պատճառել իր մարդկանց:»** (Ելք 32:14)

«14Եւ Տերը հրաժարուեց պատճառել այն չարիքները, որոնցով սպառնում էր պատժել ժողովրդին:»

3. Եվ շատ այսպիսի մեջբերումներ:

93. Աստվածաշունչը ասում է, որ Մովսեսի և Ահարոնի ներկայացրած ամեն հրաշքի դիմաց, մոզերը նույնն էին անում իրենց գաղտնի արվեստով: Այնուհետ գալիս էր հետևյալ հրաշքը.

- Մովսեսը և Ահարոնը դարձրեցին ամբողջ մատչելի ջուրը արյան: (Ելք 7:20-21)

«20Մովսէսն ու Ահարոնը արեցին այնպէս, ինչպէս որ իրենց պատուիրել էր Տէրը. փարաւոնի ու նրա պաշտօնեաների առաջ Ահարոնը վեր բարձրացնելով իր գաւազանը՝ հարուածեց գետի ջրին եւ գետի բոլոր ջրերը վերածեց արեան:» 21Գետում եղած ձկները սատկեցին, գետը նեխեց, եւ եգիպտացիները չէին կարողանում գետից ջուր խմել: Եգիպտացիների ամբողջ երկրում արիւն էր:»

- Մոզերը նույնը արեցին (Ելք 7:22) Այս անհնարին է, **քանի որ չէր կարող ջուր մնացած լինել:**

«22Իրենց կախարդութեամբ նոյնն արեցին նաեւ եգիպտացի մոզերը: Կարծրացաւ փարաւոնի սիրտը, եւ, ինչպէս որ ասել էր Տէրը, նա չլսեց նրանց:»

94. Ո՛վ սպանեց Գողիաթին:

• Դաւիթը (Թագավորաց Ա 17:23, 50)

«23Մինչ նա խօսոււմ էր, այլազգիների ճակատից դուրս եկաւ յամինացի այն փղշտացին, որի անունն էր Գողիաթ: Նա գէթացի էր: Նա կրկնեց նոյն խօսքերը, եւ Դաւիթը լսեց դրանք:»

«50Այսպիսով Դաւիթը պարսատիկով ու քարով յաղթեց

այլազգուն, հարուածեց ու սպանեց նրան:»

• Եղեանան (Թագավորաց Բ 21:19)

«19Դարձեալ պատերազմ եղաւ Ռոբուն այլազգիների դէմ, եւ բերթեհեմացի Արիողիմի որդի Եղեանան սպանեց գերացի Գողիաթին, որի նիզակի բռնակը ոստայնանկների գլան էր յիշեցնում:»

95. Ո՛վ սպանեց Սավուդին:

• «Սավուդը վերցրեց իր իսկ սուրը և ընկավ դրանից...Այսպիսով, Սավուդը մահացավ...» (Թագավորաց Ա 31:4-6)

«4ՍԱԼՈՒԴՆ ասաց իր կապարճակրին. «Սուրդ մերկացրո՛ւ եւ դրանով ինձ մահացու խոցի՛ր: Չլինի, թէ անթլփատները գան, ինձ խոցոտեն ու ծաղր ու ծանակի ենթարկեն»): Կապարճակիրը չուզեց այդ անել, քանզի սաստիկ վախեցել էր: 5ՍԱԼՈՒԴՆ առաւ իր սուրը եւ իրեն նետեց դրա վրայ: Երբ կապարճակիրը տեսաւ, թէ ՍԱԼՈՒԴը մեռաւ, ինքը եւս իրեն նետեց սրի վրայ ու նրա հետ մեռաւ: 6Մեռան ՍԱԼՈՒԴը, իր երեք որդիներն ու իր կապարճակիրը. նրա բոլոր մարդիկ նոյն օրը միասին մեռան:»

• Ամաղեկացին դաժանաբար սպանեց նրան (Թագավորաց Բ 1:1-16)

«1ՍԱԼՈՒՂԻ մահուանից եւ ամաղեկացիներին կոտորելուց յետոյ Դաւիթը վերադարձաւ եւ երկու օր մնաց Սիկեդակում:
2Երբորդ օրը Սալուղի բանակատեղիից մարդ եկաւ, որի հագուստները պատառոտուած էին, իսկ գլխին հող էր ածուած:
Երբ նա Դաւթի մօտ մտաւ, գետին ընկաւ ու խոնարհուեց նրա առաջ:
3Դաւիթը հարցրեց նրան.
«Որտեղի՞ց ես գալիս»: Նա պատասխանեց. «Փախել եմ Իսրայէլի բանակատեղիից»:
4Դաւիթն ասաց նրան. «Ի՞նչ է պատահել, պատմի՛ր ինձ»:

Մարդն ասաց. «Ժողովուրդը պատերազմի դաշտից փախաւ, շատերը վիրաւոր ընկան ու մեռան: Մեռան նաեւ Սաւուդն ու Յովնաթանը»: 5Դաւիթն իրեն լուր քերող երիտասարդին հարցրեց. «Ի՞նչ գիտես, որ Սաւուդն ու նրա որդի Յովնաթանը մեռան»: 6Լուր քերող երիտասարդն ասաց. «Դիպուածով Գեղբուս լերան վրայ էի գտնուում եւ ահա տեսայ, որ Սաւուդն ընկել էր իր նիզակի վրայ, եւ թշնամու մարտակառքերն ու հեծեալների զօրավարները հասել էին նրան: Նա յետ նայեց եւ ինձ տեսնելով՝ իր մօտ կանչեց: 7Ասացի. «Ահա այստեղ եմ»: 8Նա ասաց ինձ. «Ո՞վ ես դու»: Ասացի՝ «Ամադէկացի եմ»: 9Նա ասաց ինձ. «Խոցի՛ր ու

սպանի՛ր ինձ: Խաւարն է պատել
 ինձ, բայց շունչս դեռ վրաս
 է»: «10 Խոցեցի ու սպանեցի նրան,
 որովհետեւ գիտէի, որ նիզակի
 վրայ ընկնելուց յետոյ չէր
 ապրելու: Առայ նրա գլխից թագը,
 ապարանջանները՝ նրա բազկից
 եւ դրանք բերեցի այստեղ՝ իմ
 տիրոջը»: 11 Դաւիթն իր
 հագուստները բռնելով՝
 պատառոտեց: Իրենց
 հագուստները պատառոտեցին
 նաեւ նրա մօտ գտնուող
 մարդիկ: 12 Նրանք ողբացին, լաց
 եղան ու մինչեւ երեկոյ ծոմ
 պահեցին սրով ընկած Սաւուդի,
 նրա որդի Յովնաթանի, Յուդայի
 երկրի ժողովրդի ու Իսրայէլի տան
 համար: 13 Դաւիթն ասաց իրեն
 լուր բերող երիտասարդին.

«Որտեղի՞ց ես դու»: Մարդն
ասաց. «Մի պանդուխտ
ամաղեկացու որդի եմ ես»:

14ԴՆԱԼԻԹՆ ասաց նրան. «Ինչպե՞ս
չվախեցար ձեռք բարձրացնել ու
սպանել Տիրոջ օձեալին»:

15ԴՆԱԼԻԹՆ իր ծառաներից մեկին
կանչելով՝ ասաց. «Մօտեցի՛ր ու
սպանի՛ր սրան»: Նա հարուածեց,
ու մարդը մեռավ: 16ԴՆԱԼԻԹՆ
ասաց նրան. «Քո արիւնը թող քո
գլխին լինի, քանզի քո բերանը քո
մասին վկայութիւն տուեց՝
ասելով. «Ես սպանեցի Տիրոջ
օձեալին»»:

96. Արդյո՞ք յուրաքանչյուր մարդ մեղք է գործում:

• Այո. “Չկա մեկը, որ մեղք չի
գործում » (Թագավորաց Գ 8:46;

տես նույնպես Մնացորդաց Բ
6:36; Առակներ 20:9; Ժողովող
7:21 և Հովհաննես Ա 1:8, 10)

«46Եթէ մեղանչեն քո դէմ (քանզի
չկայ մարդ, որ չմեղանչի), եւ
նրանց վրայ բարկանաս ու նրանց
մատնես թշնամիների ձեռքը, եւ
գերեվարողները նրանց
գերեվարեն դէպի թշնամու
հեռաւոր կամ մօտիկ երկիրը,»

«36ապա երկնքից կը լսես նրանց
պաղատանքներն ու աղօթքները
եւ կը պաշտպանես նրանց
իրաւունքը:»

«9Ո՞վ կարող է պարծենալ, թէ
ինքը սուրբ սիրտ ունի, կամ ո՞վ կը
համարձակուի ասել, թէ ինքը
գերծ է մեղքերից:»

«21Երկրի վրայ չկայ արդար մի մարդ, որ բարի գործ անի եւ չմեղանչի:»

«8Եթէ ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, եւ ճշմարտութիւն չկայ մեր մէջ:»

«10Եթէ ասենք՝ «Չենք մեղանչել», սուտ ենք հանում Նրան, եւ Նրա խօսքը մեր մէջ չէ:»

• Ոչ, Իրական Բրիստոնյան չի կարող մեղք գործել, **որովհետև նրանք Աստծո զավակներն են:**”Յուրաքանչյուրը, ով հավատում է, որ Հիսուսը Բրիստոսն է, **Աստծո զավակն է:**» (**Հովհաննէս Ա 5:1**) “Մեզ պետք է անվանեն Աստծո զավակներ և այդպիսին ենք մենք:»

(Հովհաննես Ա 3:1) «Նա, ով սիրում է, ծնված է Աստծոց»

(Հովհաննես Ա 4:7) “Աստծոց ծնված ոչ մեկը մեղք չի գործում, քանի որ Աստվածային բնույթը նրա մեջ է, և նա չի կարող մեղք գործել, որովհետև նա ծնված է Աստծոց » (Հովհաննես Ա 3:9)

Այնուհետ, կրկին Այո. “Եթե մենք ասենք, որ մենք մեղք չունենք, մենք ստում ենք ինքներս մեզ և ճշմարտությունը մեր մեջ չէ:»

(Հովհաննես Ա 1:8)

«1 Ամեն ոք, ով հավատում է, թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնուած. եւ ամէն ոք, ով սիրում է ծնունդ տուողին, սիրում է նաեւ նրանից ծնուածին:»

«1 Տեսէ՛ք ինչպիսի սէր շնորհեց
մեզ Հայրը, որպէսզի մենք
կոչուենք Աստծու որդիներ.
աշխարհը մեզ չի ճանաչում նրա
համար, որ նրան էլ չճանաչեց:»

«7 Սիրելիներ՛ր, սիրենք միմեանց,
քանի որ սէրն Աստծուց է. եւ ամէն
ոք, ով սիրում է, Աստծուց է
ծնուած եւ ճանաչում է Աստծուն:»

«9 Ամէն ոք, ով Աստծուց է ծնուած,
մեղք չի գործում, որովհետեւ Նրա
սերմը մնում է նրա մէջ. չի էլ
կարող մեղանչել, որովհետեւ
Աստծուց է ծնուած:»

«8 Եթէ ասենք՝ «Մենք ոչ մի մեղք
չունենք», մենք մեզ ենք խաբում,
եւ ճշմարտութիւն չկայ մեր մէջ:»

97. Ո՞վ է կրում, ում բեռը:

• “Կրեք մեկը մյուսի բեռը և այսպիսով լրացրեք Քրիստոսի օրենքը:» (Գաղատացիներ 6:2)

«2Միմեանց բեռը կրեցե՛ք եւ այդպիսով կատարեցե՛ք Քրիստոսի օրենքը:»

• «Յուրաքանչյուրը պետք է կրի իր իսկ բեռը»
(Գաղատացիներ 6:5)

«5որովհետեւ իւրաքանչիւր ոք իր բեռն է կրելու:»

98. Քանի՞ աշակերտների երևաց Հիսուսը իր հարուժւոյունից հետո:

- **Տասներկու (Կորնթացիներ Ա 15:5)**

«Տեւ երեւաց Կեփասին եւ ապա՝ Տասներկուսին»

- **Տասմեկ (Մատթեոս 27:3-5 և Գործք 1:9,26, տես նույնպես Մատթեոս 28:16, Մարկոս 16:14, Դուկաս 24:9, Դուկաս 24:33)**

«ՅԱյն ժամանակ Յուդան, որ Յիսուսին մատնել էր, տեսնելով, որ Յիսուս դատապարտուեց, զղջաց, արծաթ դրամները վերադարձրեց

քահանայապետներին եւ ժողովրդի ծերերին ու ասաց.

4«Մեղանչեցի, որովհետեւ արդար արիւն մատնեցի»: Իսկ նրանք ասացին. «Մեր հոգը չէ, դո՛ւ

գիտես»։ 5Եւ արժաթ դրամները
նետեց տանարի մէջ եւ հեռացաւ
ու գնաց ինքն իրեն կախեց։»

«9Եւ երբ այս խօսքերն ասաց,
մինչ նրանք դեռ նայոււմ էին,
երկինք վերացաւ, եւ ամպը նրան
ծածկեց նրանց աչքերից։»

«26Եւ նրանց համար վիճակ
զցեցին. վիճակը ելաւ
Մատաթիային, եւ սա դասուեց
տասնմէկ առաքեալների հետ։»

«16Եւ նրանք դրամն առնելով՝
արեցին այնպէս, ինչպէս որ իրենց
սովորեցրել էին։ Եւ այս զրոյցը
տարածուած է հրեաների մէջ
մինչեւ այսօր։»

«14Յետոյ, մինչ Տասնմէկը սեղան էին նստել, Յիսուս նրանց երեւաց եւ յանդիմանեց նրանց իրենց անհաւատութեան եւ խստասրտութեան համար, որովհետեւ չէին հաւատացել նրանց, որոնց ինքը երեւացել էր՝ մեռելներից յարութիւն առած:»

«9Եւ վերադարձան ու պատմեցին այս ամէնը Տասնմէկին եւ բոլոր միւսներին»

«33Ապա անմիջապէս վեր կացան ու Երուսաղէմ վերադարձան եւ հաւաքուած գտան Տասնմէկին եւ նրանց հետ եղածներին:»

99. Որտե՞ղ էր Հիսուսը իր մկրտութիւնից երեք օր անց:

- Մկրտությունից հետո «հոգին» անմիջապես հանեց նրան անապատ: Եվ նա մնաց այնտեղ քառասուն օր... (Մարկոս 1:12-13)

«12Եւ անմիջապէս Հոգին նրան հանեց տարաւ դէպի անապատ:»
«13Եւ նա այնտեղ էր քառասուն օր՝ փորձուելով սատանայից: Եւ նա զազանների հետ էր, իսկ հրեշտակները ծառայում էին նրան:»

- Իր մկրտության հաջորդ օրը, Հիսուսը ընտրեց երկու աշակերտ: Երկրորդ օրը Հիսուսը գնաց Գալիլեա, ևս երկու աշակերտ: Երրորդ օրը Հիսուսը Գալիլեայի Քանայի հարսանեկան հանդիսությանն էր մասնակցում:

(Տես Հովհաննես 1:35; 1:43; 2:1-11)

«35 Հետեւեալ օրը դարձեալ այնտեղ կանգնած էր Յովհաննէսը. նաեւ՝ իր աշակերտներից երկուսը:»

«43 Յաջորդ օրը Յիսուս որոշեց Գալիլիա մեկնել. գտաւ Փիլիպպոսին ու նրան ասաց. «Արի՛ իմ յետեւից»:»

«1 Գալիլիա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում հարսանիք կար: Եւ Յիսուսի մայրը այնտեղ էր: 2 Հարսանիքի հրաւիրուեցին նաեւ Յիսուս եւ իր աշակերտները: 3 Եւ երբ գինին պակասեց, մայրը Յիսուսին ասաց. «Գինի չունեն»: 4 Եւ

Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել»: 5Նրա մայրը սպասաւորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արե՛ք»: 6Այնտեղ կային քարէ վեց թակոյկներ՝ հրեաների սովորութեան համաձայն մաքրուելու համար. նրանցից իւրաքանչիւրը շուրջ հարիւր լիտր տարողութիւն ունէր: 7Յիսուս նրանց ասաց. «Լցրե՛ք այդ թակոյկները ջրով»: Եւ լցրին բերնէբերան: 8Եւ ասաց նրանց. «Հիմա վերցրե՛ք եւ տարե՛ք սեղանապետին»: Եւ նրանք տարան: 9Եւ երբ սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց սպասաւորները, որոնք ջուր լցրին, գիտէին), 10Իսուսը փեսայի

հետ ու ասաց. «Ամէն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»: 11 Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան:»

100. Արդո՞ք մանուկ Հիսուսի կյանքին վտանգ էր սպառնում Երուսաղեմում:

• Այո, այսպիսով Հովսեփը փախաւ նրա հետ Եգիպտոս և մնաց այնտեղ մինչ Հերովդեսի մահը: (Մատթեոս 2:13,23)

«13Եւ երբ նրանք այնտեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մէջ երեւաց Յովսէփին ու ասաց. «Վէ՛ր կաց, վերցրո՛ւ այդ մանկանը եւ նրա մօրը ու փախի՛ր Եգիպտոս. եւ այնտեղ մնա՛ մինչեւ որ քեզ ասեմ. քանի որ Հերովդէսը փնտռում է այդ մանկանը կորստեան մատնելու համար»

«23Եւ եկաւ բնակուեց Նազարէթ կոչուող քաղաքում, որպէսզի կատարուի մարգարէների խօսքը, թէ՛ Նազովրեցի պիտի կոչուի:»

• Ոչ, **Ընտանիքը ոչ մի տեղ չփախավ:** Նրանք հանգստորեն ներկայացրեցին երեխային Երուսաղեմի տաճար ըստ Հրեական ավանդույթի և

վերադարձան Գալիլեա: (Բուկաս 2:21-40)

«21Եւ երբ ութ օրերը լրացան, եւ նա թլփատուեց, նրա անունը Յիսուս դրուեց, ինչպէս հրեշտակի կողմից կոչուել էր, երբ դեռ չէր յղացուել մօր

որովայնում:22Երբոր նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսէսի Օրէնքի համաձայն՝ նրան Երուսաղէմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար,«23Ինչպէս գրուած էր Տիրոջ Օրէնքում.

«Ամէն արու զաւակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ

պիտի կոչուի»:24Եւ Տիրոջ Օրէնքում ասուածի համաձայն՝ ընծայ պէտք է տալ մի զոյգ տատրակ կամ աղաւնու երկու

ձագ:25Արդ, Երուսաղէմում
 Միմէնն անունով մի մարդ կար, եւ
 այդ մարդը արդար ու
 աստուածավախ էր եւ ակնկալում
 էր Իսրայէլի միսիթարութիւնը. եւ
 Սուրբ Հոգին էր նրա մէջ:26Եւ
 Սուրբ Հոգուց հրամայուած էր
 իրեն մահ չտեսնել, մինչեւ որ
 տեսնէր Տիրոջ Օծեալին:27Նա
 Հոգով առաջնորդուած՝ եկաւ
 տաճարը, եւ երբ ծնողները բերին
 Յիսուս մանկանը՝ նրա վրայ
 կատարելու ինչ որ օրէնքի
 սովորութեան համաձայն
 էր,28Միմէնը նրան իր գիրկն
 առաւ, օրհնեց Աստծուն եւ
 ասաց.29«Այժմ, ո՛վ Տէր,
 խաղաղութեա՛նք արձակիր քո
 ծառային՝ ըստ քո
 խօսքի.30որովհետեւ այքերս

տեսան փրկութիւնը քո, 31 որ
 պատրաստեցիր բոլոր
 ժողովուրդների առաջ, 32 լոյս, որ
 կը լինի յայտնութիւն
 հեթանոսների համար եւ փառք՝
 Իսրայէլի քո ժողովրդի համար»:
 33 Եւ նրա հայրն ու մայրը
 զարմացած էին այն խօսքերի
 համար, որ ասում էին նրա
 մասին: 34 Սիմէոնը նրանց օրհնեց
 եւ ասաց նրա մօրը՝ Մարիամին.
 «Ղեա՛ սա նա է, որ պատճառ է
 դառնալու Իսրայէլի մէջ շատերի
 անկման ու բարձրացման եւ նշան՝
 հակառակութեան: «35 Իսկ քո
 հոգու միջով էլ սուր պիտի անցնի,
 որպէսզի բազում սրտերի
 խորհուրդներ յայտնի
 դառնան»:
 36 Եւ այնտեղ կար մի
 մարգարէուհի՝ Ղննա անունով՝

Փանուէլի դուստրը, Ասերի
ազգատոհմից. սա տարիքով շատ
առաջացած էր եւ ամուսնու հետ
միայն եօթը տարի էր ապրել՝
սկսած իր կուսութիւնից:37Նա
մօտ ութսունչորս տարեկան մի
այրի էր, որ չէր հեռանում
տանարից, այլ ծոմապահութեամբ
եւ աղօթքով գիշեր-ցերեկ
ծառայում էր Աստծուն:38Սա եւս
նոյն ժամին վեր կացաւ եկաւ,
գոհութիւն էր մատուցում Տիրոջը
եւ խօսում էր մանկան մասին
բոլոր նրանց հետ, որոնք
Երուսաղէմի փրկութեանն էին
սպասում:39Եւ երբ ամէն ինչ
կատարեցին Տիրոջ Օրէնքի
համաձայն, վերադարձան
Գալիլիա, իրենց քաղաքը՝
Նազարէթ:40Եւ մանուկը աճում

ու գորանում էր՝ լի
իմաստութեամբ. եւ Աստծու
շնորհները նրա վրայ էին:»

**101. Երբ Հիսուսը քայլեց ջրի
վրա, ինչպե՞ս աշակերտները
արձագանքեցին:**

• Նրանք երկրպագեցին նրան
ասելով. «Իրավմամբ, դու Աստծո
Որդին ես:» (Մատթեոս 14:33)

“33Եւ նրանք, որ նաւակի մէջ էին,
մօտեցան, երկրպագեցին նրան ու
ասացին. «Արդարեւ Աստծու
Որդին ես դու»:»

• Նրանք զար ացած էին, “քանի
որ նրանք չէին հասկանում
նկանակները, սակայն նրանց

սրտերը կարհւրացել էին:»
(Մարկոս 6:51-52)

“51 որովհետեւ ամէնքը տեսան նրան եւ խռովուեցին: Եւ նա իսկոյն խօսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերուեցէ՛ք, ե՛ս եմ, մի՛ վախեցէք»:52 Եւ նա նաւակ բարձրացաւ նրանց մօտ, եւ քամին դադարեց: Եւ նրանք առաւել եւս ապշել էին իրենց մտքում ու սաստիկ զարմանում էին,:»